EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

ՀԼԿ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB

MEDIA INITIATIVES CENTER

YEREVAN PRESS CLUB

1

ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ/ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հրապարակումը պատրաստվել է Հանրային լրագրության ակումբի կողմից իրականացվող «Արագ արձագանքման ֆոնդ նախաձեռնություն» ծրագրի շրջանակում Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (European Endowment for Democracy) աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԻՍԿԱՅԻՆ/ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 5

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ 7

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ 8

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՈՒՍՈՒՑՈՒՄ 9

ՏԵՂԱՇԱՐԺ 11

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ 12

ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 13

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ 15

ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ 17

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ 18

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՆՈՒՄԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՈՒՄ 19

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ 20

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ 21

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ 23

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ. ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԹՂԹԱԿՑԻՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ 29

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ. ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԵԱՀԿ) 32

INTERNATIONAL NEWS SAFETY INSTITUTE (INSI). ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 33

GLOBAL INVESTIGATIVE JOURNALISM NETWORK ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ՑԱՆՑ 35

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ. ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ
INTERNET-BASED PLATFORM TO PROMOTE THE PROTECTION OF JOURNALISM AND SAFETY OF JOURNALISTS
37

COMMITTEE TO PROTECT JOURNALISTS.
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ. «ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»
38

INTERNATIONAL MEDIA SUPPORT (IMS)
(ԶԼՄ-ՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ). ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ
39

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՐՑՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
43

ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ԿԻՑ Է
ԵՐԿՈՒ ՀԱՎԵԼՎԱԾ
49

Վերլուծության և ուղեցույցի վրա աշխատել են՝
Երևանի մամուլի ակումբը,
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը,
Հանրային լրագրության ակումբը:

Հրապարակումը պատրաստվել է Հանրային լրագրության ակումբի կողմից իրականացվող «Արագ արձագանքման ֆոնդ նախաձեռնություն» ծրագրի շրջանակում Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (European Endowment for Democracy) աջակցությամբ:

ՌԻՍԿԱՅԻՆ/ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար բարձր ռիսկայնության առաջադրանքներ կատարելը նշանակում է աշխատել այնպիսի պայմաններում, երբ զգալիորեն բարձր է ֆիզիկական և/կամ հոգեբանական վնասի հավանականությունը (մահ, վնասվածք կամ առողջական խնդիրներ՝ հիվանդություններ, սթրես): Լրագրողների անվտանգությանը վերաբերող տարբեր միջազգային փաստաթղթերի համաձայն՝ այդպիսի պայմաններ են համարվում՝

ՇԱՅՐԱՀԵՂ ԿԼԻՄԱ ԿԱՄ ՎՏԱՆԳԱՇԱՏ ՏԵՂԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄ, ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՏԻ, ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԽՈՇՈՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ

ՔԻՄԻԱԿԱՆ, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ (ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ, ՓՈԹՈՐԻԿՆԵՐ, ՁՐՀԵՂԵՂՆԵՐ ԵՎ ԱՅԼՆ)

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՕՐԻՆԱԿ՝ ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ՈՒՂԵԿՑՎՈՂ ՑՈՒՑՑԵՐ, ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՀԱԲԵԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1988 թ.–ին Լրագրողների միջազգային ֆեդերացիան քննարկեց անվտանգության հարցերով զբաղվող մեկ միասնական միջազգային պրոֆեսիոնալ կառույց ստեղծելու գաղափարը: Հրապարակվեց հատուկ կոդեքս, որի հիման վրա այսօր BBC–ն, CNN–ը, Reuters–ը և Associated press–ը, մինչ մեդիաաշխատակցի վտանգավոր գոտի մեկնելը, պահանջում են հատուկ պատրաստվածություն:

Խոշոր մեդիա ընկերությունները ժամանակի ընթացքում եկել են այն եզրակացության, որ հնարավոր ռիսկերը կանխելու, նվազեցնելու՝ կառավարելու համար լրագրողներին նախապատրաստական միջոցառումներ, պատշաճ պատրաստվածություն, իրազեկվածություն, ապահովագրություն որոշակի սարքավորումներ են անհրաժեշտ:

«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը 2002 թվականին կանոնադրություն հրապարակեց, որում սկզբունքներ առանձնացրեց խմբագրությունների ու լրագրողների համար՝ վտանգավոր իրավիճակներում հնարավոր ռիսկերը կանխելու և նվազեցնելու համար:

Ազատ կամք.
պատերազմի լուսաբանումը ենթադրում է հնարավոր ռիսկերի գիտակցում, հետևաբար լրագրողներն այդ քայլին պետք է դիմեն միմիայն կամավոր սկզբունքով:

Փորձառություն.
պատերազմի լուսաբանումը հատուկ հմտություններ և փորձ է պահանջում, հետևաբար խմբագիրները պետք է ընտրեն ավելի փորձառու և ռիսկային իրավիճակներին ծանոթ լրագրողներին:

Պատրաստվածություն.
պատերազմական կամ վտանգավոր այլ գոտիներում աշխատանքը պահանջում է նախապատրաստական դասընթացներ, առաջին բուժօգնության հմտություններ և համապատասխան վերապատրաստումներ:

Գույք/Սարքավորումներ.
խմբագրությունները վտանգավոր գոտիներ գործուղվող աշխատակիցներին պետք է ապահովեն անվտանգության պարագաներով:

Ապահովագրություն. Պատերազմական գոտիներում աշխատող լրագրողները պետք է ապահովագրություն ունենան՝ հիվանդության, հաշմանդամության կամ մահվան պարագայում ծախսերի համար:

Հոգեբանական աջակցություն.
խմբագրությունը պետք է պատրաստ լինի պատերազմական և այլ վտանգավոր իրավիճակների լուսաբանումից հետո լրագրողին, նրա ցանկության դեպքում, ապահովել հոգեբանական աջակցությամբ:

Իրավական պաշտպանություն.
Ժնևի կոնվենցիայի 1-ին հավելվածի 79-րդ հոդվածի համաձայն (https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/470)՝ վտանգավոր իրավիճակներում աշխատող լրագրողները համարվում են քաղաքացիական անձինք: Համապատասխանաբար, նրանք չպետք է այս կարգավիճակին հակասող որևէ քայլ ձեռնարկեն, օրինակ, պատերազմական իրավիճակում ուղղակիորեն աջակցություն ցուցաբերեն հակամարտության որևէ կողմին, զենք կամ համազգեստ կրեն կամ լրտեսեն: Լրագրողի վրա ցանկացած դիտավորյալ հարձակում համարվում է այս դրույթի ոտնահարում և որակվում որպես ռազմական հանցագործություն:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄՈԴԵԼ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յուրաքանչյուր խմբագրություն պետք է ունենա արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների իր ծրագիրը և դրան ծանոթացնի բոլոր աշխատակիցներին:

Այս ուղեցույցը ստեղծվել է լրագրողների անվտանգության միջազգային իրավունքի մի քանի առանցքային հռչակագրերի, համաձայնագրերի, հեղինակավոր լրատվամիջոցների և միջազգային փորձագետների մշակած փաստաթղթերի, հայաստանյան լրագրողների համար ստեղծված ձեռնարկների և ուսումնական նյութերի, ինչպես նաև տեղական լրատվամիջոցների փորձի հետազոտության հիման վրա:

Այս փաստաթղթի նպատակն է Հայաստանի լրատվամիջոցներին առաջարկել բարձր ռիսկային միջավայրում, արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում գործող իրենց աշխատակիցների համար մշակել անվտանգության ներքին կանոնակարգ, ինչպես նաև խրախուսել լրատվամիջոցներին՝ ներդնել անվտանգության միջոցառումների համակարգ և որդեգրել միջազգային չափանիշներին համապատասխան գործելակերպ:

Այս մոդելային ուղեցույցում ներառված են անվտանգության միջոցառումների կազմակերպման հիմնական ուղղություններին առնչվող խորհուրդներ, որոնց հիման վրա յուրաքանչյուր լրատվամիջոց կկարողանա մշակել սեփական խմբագրության և աշխատակիցների պահանջներին և առանձնահատկություններին համապատասխան ներքին քաղաքականություն/պլան:

Լրատվամիջոցի ներքին քաղաքականության փաստաթղթում առաջարկվում է ներառել ներքոնշյալ բաժինները, որոնց բովանդակությունը կարող է մշակվել՝ համապատասխանեցնելով խմբագրության ընդհանուր ռազմավարությանը, սկզբունքներին ու առանձնահատուկ պահանջներին:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Այս բաժնում ներկայացված են ընդհանուր դրույթներ՝ գրասենյակային անվտանգության կանոնների վերաբերյալ: Յուրաքանչյուր լրատվամիջոցի ղեկավարություն այս բաժինը մշակելիս պետք է հաշվի առնի տվյալ գրասենյակի շենքային պայմանների առանձնահատկությունները, ինչպես նաև դրա գտնվելու տեղը, դիրքը, հարկը, աշխատակիցների թիվը և այլն:

Խմբագրությունները պետք է ապահովեն աշխատողին անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս միջավայրով՝ աշխատանքային տարածքի պատշաճ լուսավորությամբ, շուրջօրյա սահմանված նորմալ ջերմաստիճանով, օդափոխությամբ, սահմանված նվազագույն նորմաներից ցածր աղմուկի, ճառագայթման, վիբրացիայի և աշխատողի առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ գործոնների բացակայությամբ, անխափան գործող սանիտարահիգիենիկ սենյակներով, խմելու ջրով, պահարան–հանդերձարանով, սննդի և հանգստի համար հարմարավետ սենյակով, որտեղ առկա է առաջին օգնության պարագաներով արկղը:
Լավ կլինի գրասենյակում ունենալ բավականաչափ ջուր և առաջին օգնության պարագաների արկղ:

Կազմակերպությունները պետք է տարին երկու անգամ աշխատանքային պայմանների պարբերական ստուգումներ անցկացնեն՝ հնարավոր վտանգները որոշելու, դրանք նվազագույնի հասցնելու և համոզվելու համար, որ օրինակ՝ գործում է հրդեհի տագնապի համակարգը:

Բացի հրդեհի բացահայտման և տագնապի համակարգերից՝ գրասենյակի ողջ տարածքում պետք է տեղադրված լինեն կրակմարիչներ: Գրասենյակում պետք է պարզորոշ նշված լինեն ելքերը, իսկ այդ ելքերի նշումներով գրասենյակի հատակագիծը պիտի փակցված լինի յուրաքանչյուր սենյակի կենտրոնական մասում:
Բոլոր աշխատակիցները պետք է իմանան կրակմարիչների տեղերը և դրանց օգտագործման ձևը, իմանան արագ արձագանքման բոլոր ծառայությունների հեռախոսահամարները:

Պատերազմական գործողությունների, բախումների, բնական աղետների դեպքում խմբագրությունները պետք է մշակեն և իրազեկեն աշխատակիցներին առաջնահերթ քայլերի, տարհանման պլանի, ինչպես նաև պատըսպարվելու համար մոտակա և հասանելի ապաստարանների մասին (նկուղներ, գետնանցումներ, մոտակա մետրոյի կայարաններ և այլն):

Աշխատակիցները պետք է նախապես իմանան նաև, թե որևէ արտակարգ իրավիճակի դեպքում որ աշխատակիցն ինչի համար է պատասխանատու, ով ինչ պարտականություններ ունի և ինչպես դրանք պետք է իրականացնի:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Այս բաժնում լրատվամիջոցի ղեկավարներին է ներկայացվում արտակարգ և ճգնաժամային իրավիճակներ լուսաբանող աշխատակիցների նախապատրաստական և ուսուցման գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն: Յուրաքանչյուր լրատվամիջոց այս բաժինը մշակելիս պետք է հաշվի առնի աշխատակազմի առանձնահատկությունները, այդ թվում՝ նաև գիտելիքները, փորձը, հմտությունները:

Անվտանգության կանոնների իմացությունն ու պահպանումը հաճախ կարող են երաշխավորել, որ վտանգավոր իրավիճակում մասնագիտական պարտականությունը կատարող մեդիայի աշխատակիցը չի տուժի:

Անվտանգության հարցում մանրուքներ չկան, և ամեն ինչ կարևոր է՝ սկսած խմբագրությունում հանձնարարության ձևակերպման պահից մինչև լրագրողի աշխատանքի ավարտը:

Պետք է հանգամանորեն նախապատրաստվել՝ առաջադրանքի հաջողությունը ապահովելու, ռիսկերը նվազեցնելու և իրավիճակը կառավարելու նպատակով:
Նախքան պլանավորում սկսելը՝ անհրաժեշտ է հստակ ձևակերպել առաջադրանքը. մնացած ամեն բան պլանավորվում է դրա շուրջ:
Յուրաքանչյուր դեպքի համար խմբագրությունը պետք է մշակի գործողությունների հիմնական և այլընտրանքային պլան: Գործողությունների պլանը պետք է լինի ամբողջական և հանգամանորեն ներկայացնի մի շարք մանրամասներ, օրինակ՝ տեղանքը, որտեղ պատրաստվում է գտնվել լրագրողը, ճամփորդության մասնրամասները, օրինակ՝ ինչպե՞ս է ճանապարհորդելու, որտե՞ղ է մնալու, ի՞նչ այլընտրանքային տարբերակներ կան, ի՞նչ սարքավորումներ ու պարագաներ են անհրաժեշտ, ի՞նչ կապեր կան և ի՞նչ կապեր են հարկավոր, ի՞նչ վտանգներ կան և ինչպես կարելի է կանխել դրանք, ինչպե՞ս կարելի է օգնություն ստանալ, որո՞նք են ապահով վայրերը:

Վտանգավոր հանձնարարության մեկնելիս՝ հարկավոր է խմբագրությունում ուղևորության մասին խորհրդակցություն անցկացնել, մշակել հաղորդակցության պլան և հավաստիանալ, որ բոլորն իրազեկ են ծրագրերի, հնարավոր չնախատեսված դեպքերի, գործող ընթացակարգերի մասին:

Լավ նախապատրաստումը ենթադրում է մեկնելու վայրի մասին գիտելիքների հավաքագրում և ռիսկերի գնահատում: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է հնարավորինս շատ տեղեկություններ հավաքագրել այն վայրի մասին, ուր մտադիր է մեկնել լրագրողը, օրինակ՝ անվտանգության և սոցիալական, քաղաքական ու առողջապահական պայմանների, կլիմայի, լրատվամիջոցների և ենթակառուցվածքների մասին:

Պետք է նախապես ճշտել՝ եթե կարիք լինի, ինչպես կարելի է օգնություն ստանալ, իմանալ

ապահով վայրերը և թաքստոցները: Թիմի այլ անդամների հետ (լուսանկարիչ, օպերատոր, պրոդյուսեր) նախօրոք որոշել հանդիպման վայրերը:

Խմբագրությունները պետք է պարբերաբար լրագրողների համար կազմակերպեն նախապատրաստական դասընթացներ՝ ինչպես աշխատել արտակարգ իրավիճակներում:

Դասընթացները կարող են ներառել հետևալ թեմաները՝

1 ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՈՇՆՈՒԹՅՈՒՆ

2 ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱԿԱՅԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ

3 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

5 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՏԵՂԱՇԱՐԺ

Այս բաժինը ներկայացնում է լրագրողների տեղաշարժի նախապատրաստման և իրականացման մասին տեղեկություններ: Յուրաքանչյուր լրատվամիջոցի ղեկավարություն այս բաժինը մշակելիս պետք է հաշվի առնի իր սեփական փորձը՝ ինչ բնույթի գործուղումներ և ուղևորություններ են ունենում իրենց աշխատակիցները, ինչ խնդիրներ և դժվարություններ կարող են ի հայտ գալ և որոնք են դրանց լուծման ուղիները:

Անհրաժեշտ է, որ խմբագրությունում մանրամասն նախապատրաստվի յուրաքանչյուր ուղևորություն: Փոխադրամիջոցների պատասխանատու կառավարումն ու շահագործումը վճռական նշանակություն ունեն կազմակերպությունների համար և հատկապես կարևորվում են ռիսկային միջավայրում: Ուղևորության ծրագրման ցուցակում ցանկալի է ներառել մեքենայի տվյալները, վարորդի և ուղևորների մասին տվյալներ, նախատեսված ճանապարհը, պլանավորված կանգառները ճանապարհին, մեկնելու և ժամանման մոտավոր ժամը, այլ մանրամասներ/կոնտակտային տվյալներ:

Վտանգավոր տեղանք մեկնելուց առաջ պետք է պարզել՝ արդյոք լրատվամիջոցին տրամադրված է անվտանգության ծառայություն, անցկացնել ուղևորության մասին բրիֆինգ. ապահովել, որ բոլորը տեղեկացված և իրազեկ լինեն ծրագրերի և հնարավոր չնախատեսված դեպքերի մասին, ունենալ հաղորդակցության պլան:
Ցանկալի չէ, որ խմբագրության աշխատակիցը վտանգավոր գոտի մեկնի միայնակ, նախքան ճանապարհ ընկնելը անհրաժեշտ է, որ աշխատակիցները փորձարկեն հաղորդակցության միջոցները:

Խմբագրությունը պետք է պլանավորի նաև աշխատակիցների վարքականոններն անցակետերում:



ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Ուղեցույցի այս բաժինը ներկայացնում է այն սարքավորումների և պարագաների ցանկը, որոնք հնարավոր է անհրաժեշտ լինեն լրագրողներին բարդ իրավիճակներում աշխատելիս: Այս բաժինը մշակելիս խորհուրդ է տրվում խմբագրություններին սարքավորումների և պարագաների ցուցակում ներառել պաշտպանիչ բաճկոններ, սաղավարտներ, կապի միջոցներ՝ բջջային հեռախոս կամ ցանկալի է՝ արբանյակային հեռախոս՝ արտակարգ իրավիճակների համար նախատեսված հեռախոսահամարները նախապես կարգավորելով՝ արագ միանալու համար և առաջին օգնության պարագաներ (բժշկի կողմից նշանակված, միայն դեղատնից գնված պիտակավորված դեղորայք):

Խմբագրությունները պետք է հաշվի առնեն, որ յուրաքանչյուր ճգնաժամային իրավիճակ ենթադրում է յուրահատուկ նախապատրաստության աշխատանքներ:

Վտանգավոր գոտիներ գործուղվող աշխատակիցները պետք է ապահովվեն անվտանգության այնպիսի պարագաներով, որոնք անհրաժեշտ են տվյալ դեպքում:

Դեպքի վայր մեկնողները պետք է իմանան՝ ինչպես օգտագործել առաջին օգնության պայուսակը, իսկ պայուսակի պարունակությունը յուրաքանչյուր խմբագրություն որոշի և ներառի՝

ցանկում աշխատակիցների կարիքներին համապատասխան:

Խորհուրդ է տրվում այդ ցանկը կազմելիս նկատի ունենալ ներքոնշյալ պարագաները: Դեպքի վայր մեկնելիս աշխատակիցները ցանկալի է իրենց հետ ունենան աչքերը պաշտպանելու միջոցներ՝ լողի ակնոցներ (արցունքաբեր գազից պաշտպանվելու համար), պաշտպանիչ և հարվածադիմացկուն ապակուց ակնոցներ, դեմքը ծածկող երեսկալ կամ հակագազ, ծնկակալներ, փոքրիկ կրակմարիչ, մեկանգամյա օգտագործման հակաաղմկային ականջակալներ, ռեսպիրատոր (արցունքաբեր գազից և փոշուց պաշտպանվելու համար), պաշտպանիչ գլխարկ:

Խմբագրություններին խորհուրդ է տրվում նաև հաշվի առնել, որ արտակարգ իրավիճակների դեպքում աշխատակիցները կարող են հայտնվել այնպիսի տեղանքներում, որտեղ հնարավոր է մնան շատ ավելի երկար, քան նախատեսված է, և անհրաժեշտ իրերի ցանկում ներառել նաև ջերմաձայնամեկուսիչ ծածկոց, թափոնների տոպրակներ, բազմաֆունկցիոնալ գործիք, գլխի լապտեր՝ սպիտակ, կարմիր և կապույտ լույսերով, մուգ պայուսակ՝ զանազան պարագաների համար նախատեսված մի քանի գրպանով և օղակներով, հակագազ, բազմակի վարդակի ադապտեր, ամուր կպչուն ժապավեն, սուպեր սոսինձ, ձեռքի և ականջի տաքացուցիչներ, գրպանի լապտեր, Zip փականով տոպրակներ, շվեյցարական դանակ, աղի լուծույթ, կրակայրիչ, ծալովի դանակ-պատառաքաղ, ականջակալներ:

Անպայման ահրաժեշտ է ունենալ՝

2 USB ֆլեշ կրիչ՝ նյութերի արագ կրկնօրինակման համար
1 ունիվերսալ լիցքավորման սարք՝ մեքենայում օգտագործելու համար

Հագուստ ընտրելիս պետք է ուշադրություն դարձնել, որ այն լինի ազատ, բնական գործվածքից, որպեսզի սինթետիկայի պես արագ չբռնկվի: Հագուստը պետք է գույնով տարբերվի ոստիկանության և զինված ուժերի հագուստից: Հարմարավետ, ամուր, ձիգ կապված կոշիկներն անհրաժեշտություն են:

Ուսապարկում պետք է ունենալ այնքան ուտելիք և ջուր, որպեսզի հերիքի մեկ-երկու օր: Ուսապարկը կարելի է որպես վահան օգտագործել՝ ռետինե փամփուշտներից, ջրցան մեքենաներից և բեկորներից պաշտպանվելու համար:

Անհրաժեշտ է մշակել նաև անհրաժեշտ իրերի ցանկ, եթե լրագրողը գործուղվում է արտերկիր: Պայուսակում պետք է լինեն նաև կարևոր փաստաթղթեր (անհրաժեշտ է վերցնել նաև դրանց պատճենները)՝ պատշաճ վավերականության ժամկետով և անհրաժեշտ երկիր մուտքի թույլտվությամբ անձնագիր, լրագրողի քարտ, արյան խմբի և ալերգիաների մասին տվյալներով քարտ, պատվաստումների միջազգային քարտ, միջազգային վարորդական իրավունք, ճանապարհային և քաղաքային քարտեզներ, անհրաժեշտ հեռախոսահամարներ՝ հյուպատոսական ծառայությունների, հիվանդանոցների, սեփական խմբագրության, տեղական լրագրողական կազմակերպությունների և այլն, տեղական և միջազգային տարադրամ և այլն:

ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինը ներկայացնում է լրագրողների թվային անվտանգության հիմնական կանոններ և խորհուրդներ: Լրատվամիջոցների ղեկավարներն այն մշակելիս պետք է հաշվի առնեն խմբագրության առանձնահատկությունները, համակարգիչներից օգտվելու ներքին ընթացակարգն ու մշակույթը, սարքավորումների քանակը, օգտագործման սկզբունքները:

Խմբագրությունները պետք է հետամուտ լինեն իրենց աշխատակիցների թվային անվտանգության կանոնների պահպանմանը, որպեսզի այլ անձինք չկարողանան չարտոնված մուտք գործել դեպի այդ տվյալները, չկարողանան կոտրել լրագրողի էլեկտրոնային փոստը, նրա գրառումները՝ սոցիալական ցանցերում, ֆայլափոխանակման հոսթինգները, մեսենջերները, չկարողանան մուտք գործել դեպի այդ տվյալները նույնիսկ եթե ինչ-որ կերպ նրանց ձեռքն ընկնի լրագրողի համակարգիչը/սմարթֆոնը/համակարգչային կրիչը, չկարողանան հափշտակել այդ տվյալները դրանց փոխանցման ընթացքում՝ ո՛չ ինտերնետ պրովայդերների մակարդակով, ո՛չ էլ, օրինակ, wi-fi ցանցի, որին այդ պահին միացել է լրագրողը:



Լրագրողի համար պետք է մշտապես հասանելի լինեն իր տվյալները, եթե նույնիսկ կոտրվել է /կորել է/գողացել են/ խլել են նրա նոութբուքը, սմարթֆոնը կամ համակարգչային կրիչը, նման դեպքերում նա չպետք է կորցնի մուտքը դեպի այն կարևոր տվյալները, որոնք անհրաժեշտ են աշխատելու համար: Այլ անձինք չպետք է կարողանան չարտոնված կերպով փոփոխել լրագրողի սարքավորումներում գտնվող տվյալները, օրինակ՝ աննկատ փոխել համակարգչում ֆայլերը, էլ. փոստով նամակագրությունը, ֆայլային հոսթինգներում գտնվող ֆայլերը և այլն:

Խմբագրությունները պետք է կազմեն ռիսկերի ցուցակը և ուսումնասիրեն՝ որքանով է լրատվամիջոցը կամ աշխատակիցը պաշտպանված նշված վտանգներից՝ անցկացնելով անվտանգության աուդիտ:

Մասնագետի կողմից պետք է ստուգվի, թե ինչպես է ամեն բան կարգավորված լրագրողի սարքավորումներում/խմբագրությունում (ստուգվեն համակարգիչների, սմարթֆոնների, էլ. փոստի և այլնի կարգավորումները):

Պետք է մշակել թվային անվտանգության ռիսկերի կառավարման գործընթաց՝ ինչպես պետք է պաշտպանել հաշիվները, որտեղ պետք է պահպանել կարևոր տվյալները և ինչպես պաշտպանել դրանք, ինչպիսին պետք է լինեն ծածկագրերը, ինչ հարթակներից է հարկավոր օգտվել առավել կարևոր թեմաներով նամակագրություն վարելիս և այլն:

Բացի դրանից՝ պետք է ունենալ գործողությունների ծրագիր, եթե որևէ դեպք պատահի: Դեպքի վայր մեկնելուց առաջ լրագրողը պետք է անձնական, նույնականացնող տվյալներից, լուսանկարներից, նամակներից մաքրի հեռախոսը, համակարգիչը, այլ տեխնիկա, կիրառի մի քանի շերտ պաշտպանություն ունեցող, գրագետ, ամուր գաղտնաբառեր, ստեղծի փաստաթղթերի պահպանման համար առանձին, լավ պաշտպանված հասցե կամ պահոց և այլն:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Այս բաժինը ներկայացնում է արտակարգ իրավիճակների լուսաբանման հետևանքով հոգեբանական խնդիրներ ունեցող աշխատակիցների աջակցության ընթացակարգեր, ինչպես նաև առողջության ապահովագրության վերաբերյալ տեղեկատվություն: Խմբագրություններին խորհուրդ է տրվում այս հարցերը նույնպես ներառել լրագրողների անվտանգության ներքին կանոնակարգերում՝ իրենց կարիքների և առանձնահատկություններին համապատասխան:

Հոգեբանական աջակցություն:

Ճգնաժամային և ռիսկային իրավիճակները հաճախ հանգեցնում են մարդկային ողբերգությունների:
Այս ամենի լուսաբանումը կարող է ցավ ու տառապանք պատճառել դեպքի վայրում աշխատող մարդկանց: Նախքան հավանական հոգեբանորեն տրավմատիկ հանձնարարության կատարումը՝ ղեկավարը կամ խմբագիրը պետք է խոսի լրագրողի հետ հնարավոր էմոցիոնալ ռիսկերի մասին:

Թիմի յուրաքանչյուր անդամ պետք է տեղեկացված լինի տրավմային հնարավոր արձագանքների մասին: Թիմի անդամները պետք է հասկանան, որ տարբեր մարդիկ տարբեր ձևերով են դիմակայում տրավմաներին, որ դրանց ազդեցությունը կարող է կուտակվել ժամանակի ընթացքում և թե ինչպես կողմնորոշվել, որ իրենք կամ իրենց գործընկերները կարիք ունեն օգնության: Սա վերաբերում է բոլոր աշխատակիցներին, այդ թվում՝ տեխնիկական անձնակազմին:

Խմբագրությունները պետք է հստակ պլանավորեն, թե ինչպես պետք է պահպանել և տարածել վիզուալ բովանդակությունը. տրավմատիկ պատկերների հետ կապված ծանուցումները, ֆայլերը, և ներքին հաղորդակցությունը պետք է հստակորեն հասցեագրվի և տարածվի միայն նրանց շրջանում, ում նյութը պետք է: Կարիք չկա որևէ մեկին ստիպել նայել այն տեսանյութերը, որոնք երբեք չեն հեռարձակվելու:

Հնարավորության դեպքում գրասենյակը, որտեղ աշխատակիցները գործ ունեն դաժան բռնությունների պատկերների հետ, պետք է դուրս նայող պատուհան ունենա, որտեղից երևում են ծառեր և բնության այլ տեսարաններ:

Խմբագրությունը պետք է պատրաստ լինի պատերազմական և այլ վտանգավոր իրավիճակների լուսաբանումից հետո լրագրողին, նրա ցանկության դեպքում, ապահովել հոգեբանական խորհրդատվությամբ:

Խմբագրությունը պետք է պատրաստ լինի անհրաժեշտության դեպքում փոխարինել հոգեբանական տրավմա տարած աշխատակցին, տրամադրել նրան լրացուցիչ ժամանակ՝ իրավիճակը հաղթահարելու համար:

8.1 Ապահովագրություն

Միջազգային պրակտիկայում ընդունված է, որ պատերազմական և այլ վտանգավոր գոտիներում աշխատող լրագրողները պետք է ապահովագրություն ունենան՝ հիվանդության, հաշմանդամության կամ մահվան պարագայում ծախսերի համար, և խմբագրությունները հոգում են աշխատակցի ապահովագրական ծախսերը՝ մինչև աշխատակցին վտանգավոր հանձնարարություն տալը:

Հայաստանում կյանքի ապահովագրությունը լրագրողների համար դեռևս հասանելի չէ: Խորհուրդ է տրվում խմբագրություններին, անկախ վտանգավոր իրավիճակների լուսաբանման պրակտիկայից, ամենամյա բյուջեում նախատեսել լրագրողների համար առողջության ապահովագրության ծախսերը. ապահովագրական փաթեթների տեսակը և ծավալը կարող է քննարկվել ապահովագրական ընկերությունների հետ և ընտրվել խմբագրությանն առավել համապատասխան և հարմար տարբերակ:

ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Այս բաժինը ներառում է համավարակների/համաճարակների լուսաբանման ընդհանուր դրույթներ: Խմբագրություններին խորհուրդ է տրվում բարձր ռիսկային իրավիճակների լուսաբանման ներքին կանոնակարգերում ընդգրկել նաև դրույթներ՝ համավարակների դեպքում աշխատելու կանոններ՝ խմբագրության աշխատակիցների համար:

Համաճարակների մասին տեղեկություններ պատրաստելիս խմբագրությունները պետք է հետևեն իշխանությունների և համապատասխան իրավասու մարմինների՝ տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացված պահանջներին և առաջարկություններին: Պետք է հետևել նաև ԱՀԿ ուղեցույցներին՝ տվյալ ժամանակահատվածում համապատասխան քայլերի, ինչպես նաև պաշտպանիչ միջոցների, օրինակ՝ բժշկական դիմակի օգտագործման վերաբերյալ:

Համաճարակի լուսաբանման նպատակով լրագրողին հանձնարարության ուղարկելուց առաջ խմբագրությունը պետք է գնահատի լրագրողի անհատական ռիսկը՝ առողջական վիճակը, պատրաստվածությունը: Պետք է խուսափել դեպքի վայր ուղարկելուց այն աշխատակիցներին, որոնք տվյալ դեպքում կարող են համարվել խոցելի:
Կարանտինի ժամանակ և բժշկական հաստատություններում աշխատելիս լրագրողները պետք է հետևեն տեղում աշխատող մասնագետների պահանջներին և խորհուրդներին:

Խմբագրությունները պարտավոր են գրասենյակներում ապահովել հակահամաճարակային նորմերը, անհրաժեշտության դեպքում ապահովել աշխատակիցների սոցիալական հեռավորությունը, անհատական անվտանգության միջոցները՝ պաշտպանիչ դիմակներ, ախտահանման միջոցներ, հիգիենայի պարագաներ (անձեռոցիկ, թաց անձեռոցիկ) և այլն:

Համաճարակով պայմանավորված՝ պետության կողմից սահմանափակումների հայտարարման դեպքում խմբագրությունը պետք է մշակի հեռավար կամ հիբրիդային աշխատանքի պլան՝ ապահովելով աշխատակցին անհրաժեշտ միջոցներով:



ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

Խորհուրդ է տրվում խմբագրություններին փաստաթղթում ներառել նաև ճգնաժամային իրավիճակներում իրենց աշխատակիցների մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում համապատասխան վարքականոնները: Այս բաժնում կարող են ներառվել հետևյալ կանոնները:

Լրագրողները իրենց աշխատանքի ընթացքում մշտապես պետք է կրեն իրենց լրատվամիջոցը ներկայացնող տարբերանշան, որի վրա ցանկալի է տեսանելի լինի PRESS գրությունը:

Պատերազմական կամ այլ վտանգավոր իրավիճակներում լրագրողները անպայման պետք է կրեն պաշտպանիչ հանդերձանք, որին նույնպես պետք է փակցված լինի PRESS գրությունը: Հակամարտությունների, զինված բախումների, ցույցերի, ապստամբությունների ընթացքում լրագրողը պետք է պահպանի չեզոքություն և հանդես չգա որպես որևէ կողմի աջակից: Արտակարգ իրավիճակների դեպքում իրենց իսկ անվտանգությունը վտանգի չենթարկելու համար, լրագրողները պետք է հետևեն պատկան մարմինների հրահանգներին, տուրք չտան արկածախնդրությանը, իրավապահ մարմինների հետ առնչվելիս մաս չդառնան տարաբնույթ սադրանքների: Լրագրողը որևէ պարագայում չպետք է զենք կրի: Լրատվամիջոցի ներկայացուցիչները պետք է հարգանքով վերաբերվեն արտակարգ իրավիճակի հետևանքով տուժած մարդկանց և նրանց զգացմունքներին:

ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՆՈՒՄԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Խմբագրություններին խորհուրդ է տրվում լրագրողների անվտանգության ներքին կանոնակարգ-փաստաթղթի բովանդակությունը քննարկել աշխատակիցների հետ, հաշվի առնել նրանց առաջարկությունները և առարկությունները:

Լրատվամիջոցի ղեկավարության կողմից փաստաթուղթը վերջնական տեսքի բերելուց և հաստատելուց հետո այն պետք է հասանելի լինի բոլոր աշխատակիցների համար՝ առցանց և թղթային տարբերակով, ինչպես նաև առաջարկվում է տրամադրել յուրաքանչյուր նոր ընդունվող աշխատակցի՝ աշխատանքային պայմանագրին կից:



ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Միջազգային իրավունքում մի քանի փաստաթղթեր լրագրողների անվտանգության ապահովման հարցում ունեն շրջանակային նշանակություն և կոչված են ապահովելու անվտանգ միջավայրի համար նպաստավոր պայմաններ:
Դրանք հետևյալն են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Ժնևի համաձայնագրերը (Ժնևի համաձայնագրեր ընդհանուր անվամբ կոչվում են չորս պայմանագրեր և երեք լրացուցիչ արձանագրություններ, որոնք սահմանում են պատերազմում մարդասիրական վերաբերմունքի միջազգային իրավունքի ստանդարտները), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 2005/81 բանաձևը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1738 (2006) բանաձևը:

Լրագրողների անվտանգության առումով ամենաակտիվ դերակատարում ունի ՄԱԿ-ը՝ կազմելով հաշվետվություններ և հետազոտություններ, ընդունելով բանաձևեր, ինչպես նաև մշակելով չափորոշիչներ այս ոլորտի համար:

1994 թվականից ՄԱԿ-ի ԳՔ նախաձեռնությամբ աշխարհում նշվում է Մամուլի ազատության միջազգային օրը, որը կոչված է բարձրաձայնելու մամուլի ազատության կարևորությունը և հիշեցնելու կառավարություններին՝ 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածով ամրագրված՝ խոսքի ազատության իրավունքը հարգելու և պաշտպանելու իրենց պարտականության մասին:

ՄԱԿ-ի փաստաթղթերից ամենանշանակալիցը **«Լրագրողների անվտանգության և անպատժելիության խնդիրների՝ ՄԱԿ-ի գործողությունների պլանն»** է, որը մշակվել և ընդունվել է 2012 թ.՝ դառնալով այս ուղղությամբ ՄԱԿ-ի առաջին ռազմավարական փաստաթուղթը:

Լրագրողների անվտանգության և անպատժելիության խնդիրների՝ ՄԱԿ-ի ԳԱ A /RES/68/163 բանաձևն ընդունվել է 2013 թ., այն նաև նոյեմբերի 2-ը հռչակել է լրագրողների դեմ հանցագործությունների անպատժելիության դադարեցման միջազգային օր:

Այս ուղենշային համարվող բանաձևը «միաձայն դատապարտում է լրագրողների և լրատվամիջոցների աշխատողների նկատմամբ բոլոր հարձակումներն ու բռնությունները, ինչպիսիք են խոշտանգումները, արտադատական սպանությունները, բռնի անհետացումները և կամայական կալանքը, ինչպես նաև ահաբեկումը և հետապնդումը ինչպես հակամարտության, այնպես էլ ոչ կոնֆլիկտային պայմաններում»:

2013 թ. բանաձևով ՅՈՒՆԵՍԿՕ-ին շնորհվել է «Լրագրողների անվտանգության և անպատժելիության խնդիրների՝ ՄԱԿ-ի գործողությունների պլանի» իրագործման ընդհանուր համակարգողի դերը:

Այդուհետև ՅՈՒՆԵՍԿՕ-ն գործում է անդամ պետությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի համապատասխան գործակալությունների, կազմակերպությունների, հիմնադրամների և ծրագրերի համապատասխան տեղեկատվության փոխա-

նակման կենտրոնական կետերի միջոցով:
Որպես խոսքի ազատությունը և մամուլի ազատությունը խթանելու մանդատ ունեցող ՄԱԿ-ի գործակալություն՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն Մարդու իրավունքների գերագույն կոմիսարի գրասենյակի (OHCHR) հետ համատեղ համակարգում է ՄԱԿ-ի համապատասխան մարմիններում լրագրողների անվտանգության համար կոորդինացիոն կենտրոնների (focal points) պաշտոնական ձևավորումը:

Լրագրողների անվտանգության վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր աշխատանքները ծավալում է հետևյալ ուղղություններով՝ **չափորոշիչների ձևավորում և քաղաքականության մշակում, մշտադիտարկում և հաշվետվություն, կարողությունների զարգացում, ակադեմիական հետազոտություն և կոալիցիաների ամրապնդում:**

Այս շրջանակներում կազմակերպությունը աշխատում է ուժեղացնել անդամ պետությունների կարողությունները՝ կամավոր հիմունքներով կանխելու լրագրողների նկատմամբ հարձակումները, պաշտպանելու նրանց և քրեական պատասխանատվության ենթարկելու այդ հարձակումներն իրականացնողներին:

Բացի դրանից՝ կարևորվում են նաև մամուլի ազատության կարևորության և լրագրողների անվտանգության հարցերում դատական իշխանությունների, իրավապահ մարմինների և խորհրդարանների ներկայացուցիչների իրազեկմանն ուղղված քայլերը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն առանձնահատուկ շեշտադրում է կին լրագրողներին ուղղված սպառնալիքների դեմ պայքարի կարևորությունը՝ առցանց, թե՝ իրական կյանքում:

[1]Բնագրով՝ UN Plan of Action on the Safety of Journalists and the Issue of Impunity.
անպատժելիություն արտահայտությունն այստեղ և այսուհետև օգտագործվում է լրագրողների վրա հարձակվողների անպատժելիություն իմաստով-խմբ:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

(Journalists' Safety Indicators (JSI)

«Լրագրողների անվտանգության ցուցիչները» մշակվել են ՄԱԿ-ի Գլխավոր գործադիր կոմիտեի կողմից լրագրողների անվտանգության մասին ՄԱԿ-ի գործողությունների պլանի և անպատժելիության խնդրի հաստատման և 2013-2014 թթ. իրականացման ռազմավարության մեկնարկի համատեքստում: Դրանք թույլ են տալիս **քարտեզագրելու** հիմնական առանձնահատկությունները, որոնք կարող են օգնել **գնահատելու**, թե որքանով են լրագրողները կարողանում ապահովել իրենց աշխատանքը անվտանգ պայմաններում և որոշել, թե արդյոք պատշաճ կերպով նրանք հետևում են իրենց նկատմամբ կատարված հանցագործությունների բացահայտմանը: JSI-ները ծառայում են համապատասխան տարբեր շահագրգիռ կողմերի ձեռնարկած գործողությունների բացահայտմանը՝ լրագրողների անվտանգության խթանման և անպատժելիության դեմ պայքարում:

Հարկ է նշել, որ այդ ցուցիչները նախատեսված են ոչ թե որպես ունիվերսալ մոդել, այլ ավելի շատ ուշադրություն են հրավիրում մի շարք կետերի վրա, որոնք կարող են ծառայել խնդրի քարտեզագրմանը և ըմբռնմանը:

Գոյություն ունի ցուցիչների երկու հավաքածու՝ մեկը նպատակաուղղված է **ազգային** գնահատման համար, իսկ մյուսը վերաբերում է **գլոբալ (միջազգային)** մակարդակին:

Լրագրողների անվտանգության ցուցիչներ. գլոբալ (միջազգային) մակարդակ

The problem exists at many levels, and so too must the solution.
Հիմնախնդիրը գոյություն ունի տարբեր մակարդակներում, ուրեմն այդպիսին պետք է լինի նաև լուծումը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ ԶԼՄ-ների զարգացման ցուցանիշների վրա հիմնված այս ցուցիչները կարող են ծառայել որպես տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ՄԱԿ-ի՝ լրագրողների անվտանգության և անպատժելիության հարցի վերաբերյալ՝ ՄԱԿ-ի գործողությունների պլանի առաջընթացի գնահատման միջոց, որը տարբերվում է ազգայինից:
Դրանք հարմարեցված են այս մակարդակների համապատասխան առանձնահատկություններին և գործող միջազգային դերակատարներին: Ուստի՝ ուշադրության կենտրոնում են լրագրողների անվտանգության խնդիրները՝ միջազգային հաստատությունների մակարդակով, որոնք գործում են տարածաշրջանային կամ գլոբալ լիազորություններով:

Այս ցուցիչները վերլուծական գործիք են.
դրանք ներառում են միջազգային և գլոբալ մակարդակներում մի շարք հնարավոր գործոններ, որոնք կարող են ազդել լրագրողների անվտանգության վրա:

Դրանք թույլ են տալիս գնահատել տարածաշրջանային կամ գլոբալ տարբեր մակարդակի շահագրգիռ դերակատարների և ինստիտուտ-

ների գործողությունները: Այս դերակատարները խմբավորվել են երեք հիմնական կատեգորիաների, որոնց գործողությունները կարող են ուղղակիորեն ազդել լրագրողների անվտանգության վրա: Յուրաքանչյուր դերակատարի համար համառոտ նկարագրված են համատեքստը և հիմնական խնդիրները:
Յուրաքանչյուր բաժնի ներքո տրված են մի շարք հիմնական ցուցիչներ:

Այդ դերակատարներն են ՄԱԿ-ի գործակալությունները, տարածաշրջանային միջկառավարական մարմինները և միջազգային ՀԿ-ները:
Սահմանվում են երեք լայն ցուցիչներ՝ **գործողությունների մշտադիտարկում, խթանում և համակարգում:**

Հիմնական ցուցիչներ

1. ՄԱԿ-ի համակարգը գլոբալ մակարդակում մշտադիտարկում է լրագրողների անվտանգությունը

2. ՄԱԿ-ի համակարգը գլոբալ մակարդակում խթանում է նորմատիվային այն տեսակետը, որ ազատ արտահայտման չափանիշները ներառում են լրագրողների անվտանգությունը և անպատժելիության դեմ միջոցները

3. ՄԱԿ-ի համակարգը սահմանում է արդյունավետ միջազգային համակարգման մեխանիզմներ

Լրագրողների անվտանգության ցուցիչներ. ազգային մակարդակ

JSI-ները պարունակում են երեք հիմնական տարրեր՝ **ցուցիչներ, ստուգման միջոցներ** և **տվյալների հնարավոր աղբյուրներ** (the indicators, the means of verification and the possible data sources):

JSI-ի կառուցվածքը

Գործիքն ունի մի շարք հատուկ ցուցիչներ, որոնք խմբավորված են տարբեր կատեգորիաներով: Ցուցիչների առաջին կատեգորիան (Ա) նպատակ ունի ընդհանուր պատկերացում կազմելու կոնկրետ երկրում լրագրողների անվտանգության հետ կապված իրավիճակի մասին, մյուս կատեգորիաները (Բ-Ե) դիտարկում են տարբեր շահագրգիռ կողմերի՝ ՄԱԿ, պետական և քաղաքական գործիչներ, ՔՀԿ-ներ և գիտնականներ, ԶԼՄ-ներ և միջնորդ կազմակերպություններ՝ լրագրության անվտանգության հարցերում նրանց դերերի և գործողությունների առումով:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ. ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԹՂԹԱԿՑԻՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Փարիզի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում «Լրագրողական կազմակերպությունները՝ հանուն մեդիա մասնագետների անվտանգության» գիտաժողովի կապակցությամբ, «Լրագրողներ՝ առանց սահմանների» կազմակերպությունը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2016 թ.պաշտոնապես մեկնարկեցին «Լրագրողների անվտանգության ուղեցույց. բարձր ռիսկային միջավայրերում աշխատող թղթակցիների ձեռնարկի» վերջին հրատարակությունը:

«Լրագրողների անվտանգության ուղեցույցը» պարունակում է լրագրողների անվտանգությունը բարելավելուն ուղղված կարևոր և բազմազան տեղեկություններ: Այն շեշտում է մանրակրկիտ **պլանավորման** կարևորությունը՝ նախքան վտանգավոր առաքելություններում հանձնարարություններ ստանձնելն ու կատարելը, և լրագրողների համար կարևոր գործիքներ է ներկայացնում:

«Լրագրողների անվտանգության ուղեցույցն» առաջին անգամ հրատարակվել է 1992 թ.: Այդ ժամանակից ի վեր այն թարմացվել է, թարգմանվել մի քանի լեզուներով և լայնորեն տարածվել: Նոր տարբերակն անդրադառնում է նոր սպառնալիքներին և մարտահրավերներին՝ օրեցօր ավելի ու ավելի վտանգավոր դարձող մասնագիտության համար: Նոր ավելացված գլուխները կարևորում են **թվային անվտանգության** խնդիրը, լրագրողների աճող անհանգստությունները, մանրամասն ներկայացնում **անվտանգության նախազգուշական միջոցներ՝** բնական աղետները կամ համաճարակները լուսաբանողների համար: Դրանք նաև անդրադառնում են **սեռական բռնության** խնդրին, մասնավորապես՝ ուղղված կին լրագրողներին:

«Լրագրողների անվտանգության ուղեցույցն» առաջին գլխում մանրամասն ներկայացնում է **լրագրողների համար աճող ռիսկերը:** Մասնավորապես. լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար բարձր ռիսկայնության առաջադրանքները ենթադրում են աշխատել այնպիսի պայմաններում, երբ զգալիորեն բարձր է ֆիզիկական վնասի հավանականությունը (մահ, վնասվածք կամ լուրջ հիվանդություն): Այդպիսի պայմաններ են համարվում՝

• թշնամական միջավայրը՝ բռնապետություն, բախումների գոտի, ապստամբություն կամ խոշոր հանցագործություններ, ինչպես նաև ծայրահեղ կլիմա կամ տեղանք ունեցող տարածքներ (ջունգլիներ, բևեռային շրջաններ, անապատ),

• վտանգավոր իրադարձությունները, օրինակ՝ բռնությամբ ուղեկցվող ցույցեր, անկարգություններ, ահաբեկչություններ կամ քիմիական, կենսաբանական կամ միջուկային պատահարներ, բնական աղետներ (երկրաշարժեր, փոթորիկներ, ջրհեղեղներ) կամ համաճարակներ,

• բարձր ռիսկային գործողությունները, օրինակ՝ հետաքննություն ահաբեկչական կամ հանցավոր կամ զինված ծայրահեղական խմբավորման ներսում, կամ գաղտնի հետաքննություն իրականացնելը (առանձնակի՝ երկակի սպառնալիքի են ենթակա կին լրագրողները՝ նկատի ունենալով լրատվամիջոցներում նրանց աճող թիվը):

Ինչպես վերևում նշվեց, առանձնակի կարևորություն է տրվում նախապատրաստական աշխատանքին:
Պլանավորում և նախապատրաստում գլուխը հանձնարարում է. նախքան վտանգավոր վայրում հանձնարարության մեկնելը՝ անհրաժեշտ է պատրաստ լինել ֆիզիկապես, մտավոր և կազմակերպչական տեսանկյունից: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է մեկնման վայրի/երկրի մասին տեղեկատվություն հավաքել, գնահատել առաջադրանքի կատարման ռիսկերը, ընտրել հուսալի կապեր և մարդկանց, այսպես կոչված՝ «ֆիքսերների», որոնք իրենց կօգնեն տեղում, ինչպես նաև մշակել անվտանգության և հաղորդակցման ընթացակարգեր՝ ճանապարհորդության ժամանակ օգտագործելու նպատակով:
Լավ նախապատրաստումը ենթադրում է մեկնելու վայրի մասին գիտելիքների հավաքագրում և ռիսկերի գնահատում: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է հնարավորինս շատ տեղեկություններ հավաքագրել այն վայրի մասին, ուր մտադիր է մեկնել լրագրողը, օրինակ՝ անվտանգության և սոցիալական, քաղաքական և առողջապահական պայմանների, կլիմայի, լրատվամիջոցների և ենթակառուցվածքների մասին: Անհրաժեշտ է ծանոթանալ տեղի մշակույթին, սովորույթներին, վարքուբարքին, հագուստի հետ կապված սովորույթներին: Սա կօգնի ավելի լավ հասկանալ շրջապատը և ավելի հեշտ ինտեգրվել: Այս տեղեկությունները կօգնեն **հանգամանորեն գնահատել ռիսկերը և իմանալ սեփական սահմանափակումները:**
Մինչև հանձնարարության մեկնելը՝ խորհուրդ է տրվում ձեռնարկել **նախազգուշական միջոցներ՝ առողջական խնդիրների հետ կապված, անցնել դասընթացներ առաջին օգնության և թշնամական միջավայրի հարցերով,** ինչպես նաև կարգավորել **ֆինանսական, փաստաթղթային, ներընտանեկան և այլ խնդիրներ՝ հանձնարարության մեկնելու խաղաղ մտքով և խղճով:** Այս վերջին բաժնում թվարկվում են այնպիսի կարևոր միջոցառումներ, ինչպիսիք են՝ կյանքի և առողջության ապահովագրությունը, անշարժ գույքի, ֆինանսների հետ կապված խնդիրները, անձնական հարաբերությունների հստակեցումը և որ վերջին շրջանի մարտահրավերներից ամենակարևորն է՝ **հոգալ թվային անվտանգության** մասին՝ անձնական, նույնականացնող տվյալներից, լուսանկարներից, նամակներից մաքրել հեռախոսը, համակարգիչը, այլ տեխնիկա, կիրառել մի քանի շերտ պաշտպանություն ունեցող, գրագետ գաղտնաբառեր, ստեղծել փաստաթղթերի պահպանման համար առանձին, լավ պաշտպանված հասցե կամ պահոց և այլն:

Նախապատրաստական աշխատանքի կարևոր փուլերից է պայուսակի նախապատրաստումը: Անհրաժեշտ է ունենալ բարձր ռիսկային վայրերում աշխատելու համար անհրաժեշտ իրերով պայուսակ, որի պարունակության ցանկը մշակվել է Agence France-Presse (AFP) լրատվական գործակալության կողմից՝ ամենատարբեր մասնագետների, այդ թվում՝ ռազմական փորձագետների օգնությամբ: Իդեալական կլինի այն պատրաստ փաթեթավորված ունենալ միշտ և հարմարեցնել ու լրացնել՝ ըստ հանգամանքների և անհրաժեշտության:

Ահա այն անհրաժեշտ իրերի ցանկը, որոնք խորհուրդ է տրվում հավաքել պայուսակում.

• թեթև սաղավարտ
• ջերմա և ձայնամեկուսիչ ծածկոց
• լյումինեսցենտային լուսարձակ
• պլաստիկ փայտիկներ
• թափոնների տոպրակներ
• բազմաֆունկցիոնալ գործիք
• գլխի լապտեր՝ սպիտակ, կարմիր և կապույտ լույսերով
• մուգ պայուսակ՝ զանազան պարագաների համար նախատեսված մի քանի գրպանով և օղակներով
• հակագազ
• թթվածնային դիմակ
• բազմակի վարդակի ադապտեր
• ամուր կպչուն ժապավեն
• սուպեր սոսինձ
• կախովի կողպեք
• ձեռքի և ականջի տաքացուցիչներ
• սեղմված շապիկ (Compressed t-shirt)
• պաշտպանիչ ակնոց
• գրպանի լապտեր
• լարովի լապտեր
• Zip փականով տոպրակներ
• շվեյցարական դանակ
• աղի լուծույթ
• կրակայրիչ
• ծալովի դանակ-պատառաքաղ
• ականջակալներ:

Անպայման ահրաժեշտ է չմոռանալ վերցնել՝

• 2 USB ֆլեշ կրիչ՝ արագ կրկնօրինակման համար

• 1 ունիվերսալ լիցքավորման սարք՝ մեքենայում օգտագործելու համար

•1 միջազգային ադապտեր՝ էլեկտրական վարդակների համար:

Պայուսակում պետք է լինեն նաև **կարևոր փաստաթղթեր** (անհրաժեշտ է վերցնել նաև դրանց պատճենները)՝ պատշաճ վավերականության ժամկետով և անհրաժեշտ երկիր մուտքի թույլտվությամբ անձնագիր, լրագրողի քարտ, արյան խմբի և ալերգիաների մասին տվյալներով քարտ, պատվաստումների միջազգային քարտ, միջազգային վարորդական իրավունք, ճանապարհային և քաղաքային քարտեզներ, անհրաժեշտ հեռախոսահամարներ՝ հյուպատոսական ծառայությունների, հիվանդանոցների, սեփական խմբագրության, տեղական լրագրողական կազմակերպությունների և այլն, տեղական և միջազգային տարադրամ և այլն: Հագուստը պետք է լինի զուսպ, ամուր և համապատասխանի կլիմայական պայմաններին:

AFP-ն առաջարկում է ունենալ երկու պայուսակ: Առաջինում գիշերակացի համար անհրաժեշտ պարագաներ՝ փոխնորդ հագուստ, թեթև կոշիկներ, հիգիենայի պարագաներ, քնապարկ և այլն: Երկրորդում արդեն հիմնական պայուսակն է՝ վերը թվարկված պարունակությամբ:

«Երկրորդը, որը ոչ մի էական բան չի պարունակում, կարող է մնալ հյուրանոցի համարում, իսկ առաջինը միշտ պետք է ձեզ հետ լինի», - հորդորում է Ուղեցույցը:

Առաջադրանքի մեկնելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ ձեռնարկված են վերը թվարկված միջոցները:

Անվտանգության պահպանումը՝ առաջադրանք կատարելիս

Թեև յուրաքանչյուր առաջադրանքի դեպքում հանգամանքները տարբեր են, սակայն կան մի շարք ընդհանուր կանոններ, որոնք կարող են կիրառվել:

• Անհրաժեշտ է լինել համեստ, քանի որ ավելորդ ինքնավստահությունը կարող է վտանգավոր լինել: Յուրաքանչյուր առաջադրանքի հարկ է վերաբերվել այնպես, կարծես դա առաջինն է: Խիստ կարևոր է հարգալից վերաբերմունքը մարդկանց և տեղական սովորույթների հանդեպ, որոնց, հիշեցնում ենք, հարկ է ծանոթանալ նախապես՝ աչքի չընկնելու և անհարմար վիճակներում չհայտնվելու համար:

• Ուշադրության են արժանի խորհուրդները՝ օգտագործելու առողջ բանականությունը, վստահելու սեփական բնազդներին, զգոն լինելու՝ ճանաչելու ցանկացած նախազգուշացնող նշան, թույլ չտալու, որ ադրենալինը կամ հետաքրքրասիրությունը «քշի հեռու»: «Պատմությունը կամ լուսանկարը չարժի լրագրողի կյանքը»,- ասում է Ուղեցույցը:

Այս ամենին հետևելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի հարցերի, ինչպիսիք են տեղավորումը բնակարանում, ճանապարհորդությունը և հաղորդակցության խնդիրները, պատերազմական գոտիներում անվտանգության նախազգուշական միջոցներին հետևելը, ականների և կասետային զինամթերքի հետ վարվեցողության կանոններին տիրապետելը, ծանոթությունը՝ դարանակալումներին, ռմբակոծությունների և ծուղակների դեպքում վարվելակերպին, բնական աղետների և համաճարակների ժամանակ, ամբոխի մեջ, ցույցերի և խռովությունների ընթացքում աշխատանքի կանոններին, սեռական բռնության վերաբերյալ կանանց համար խորհուրդներին, գերեվարման կամ առևանգման դեպքերում հնարավոր գործողություններին:
Թվային անվտանգության կանոններին անհրաժեշտ է հետևել ոչ միայն մինչև առաջադրանքի մեկնելը, ինչպես արդեն նշվեց վերևում, այլ նաև բուն առաջադրանքի վայրում, ինչպես նաև՝ արտակարգ իրավիճակներում կամ գաղտնալսման պայմաններում:

«Ուղեցույցը» ներկայացնում է նաև, այսպես կոչված, **լավագույն փորձի** օրինակները և թե ինչպես կարելի է վիրավորներին առաջին բուժօգնություն ցուցաբերել, ապաքինել ֆիզիկական և հոգեբանական վնասվածքները, կառավարել տրավմատիկ սթրեսները:
Առանձին գլուխ է հատկացվում կոնկրետ մարդկանց կոնկրետ պատմություններին, այսպես կոչված՝ **վկայություններին:** Իսկ հավելվածներն ընդգրկում են հետևյալ բաժինները՝ «Լրագրողների պաշտպանությունը պատերազմական գոտիներում», «Մամուլի ազատության վերաբերյալ հիմնական փաստաթղթեր», «Լրագրողների իրավունքների և պարտականությունների հռչակագիր», «Հարաբերությունները ԿԽՄԿ-ի հետ», «Օգտակար կոնտակտներ», «Ապահովագրություն «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության միջոցով», «Թշնամական միջավայրի հարցերով դասընթացներ տրամադրողներ»:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ. ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԵԱՀԿ)

«Լրագրողների անվտանգության ուղեցույցը» ևս սահմանում է լրագրողների անվտանգությանը և այս հարցում անպատժելիությանը վերջ դնելու անհրաժեշտությանը վերաբերող նույնանման խորհուրդներ: Այստեղ առավել հիշարժան է լրագրողների անվտանգության հարցում քաղաքացիական հասարակության և ոչ կառավարական կազմակերպությունների և ԶԼՄ-ների մասնագիտական ստանդարտների և ինքնակարգավորման դերի ընդգծումը:

«ԶԼՄ-ների մասնագիտական ստանդարտները և ինքնակարգավորումը» գլխում մասնավորապես նշվում է, որ իրենք՝ լրագրողները, խմբագիրները և ԶԼՄ-ների սեփականատերերը պարտավոր են ձեռնարկել՝ վտանգավոր վայրերում առաջադրանք կատարելիս ԶԼՄ-ների ներկայացուցիչների ֆիզիկական անվտանգությունը ապահովելու համար հնարավոր բոլոր միջոցները՝ ներառյալ անձնական ապահովագրության, ուսուցման և աջակցության համակարգերի հարցերը: Քանի որ այդպես է հնարավոր նվազագույնի հասցնել վտանգներն ու ռիսկերը:
Ուղեցույցն ընդգծում է, որ այնուամենայնիվ, դրանց արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ինչպես են պետությունները կատարում իրենց պարտավորությունները՝ օգնելու լրագրողներին պաշտպանելուն և նրանց հնարավորություն տալու կատարելու իրենց աշխատանքը: Կառավարության բոլոր ճյուղերը, ներառյալ՝ զինված ուժերը, պետք է ճանաչեն և պաշտպանեն լրագրողների՝ որպես քաղաքացիական անձանց իրավունքները, ովքեր աշխատում են հակամարտության գոտիներում՝ հասարակությանը տեղեկացված պահելու համար: Իսկ լրագրողներն ու լրատվամիջոցներն իրենց հերթին պետք է մշտապես ձգտեն պահպանել բարձր մասնագիտական չափանիշներ: Սակայն, երբ լրագրողները սխալներ են թույլ տալիս, կառավարությունները չպետք է օգտագործեն դրանք՝ լրացուցիչ վերահսկողություն սահմանելու կամ լրատվամիջոց փակելու համար:

Լրագրողների անվտանգության հիմնական խնդիրների ապահովման համար այստեղ կարևորվում են նաև պետության ներսում գործող **իրավական դաշտը, դատական, իրավապահ և քրեական համակարգերը, լրատվամիջոցների և պետական մարմինների միջև պայմանավորվածությունները**, մասնավորապես՝ բաց և կարգավորված երկխոսությունը:

Բաժիններն առանձնացված են հետևյալ կերպ՝

- Լրագրողների աղբյուրների պաշտպանություն
- Վերահսկողության և տվյալների հավաքագրման և պահպանման մասին օրենքներ
- Տեղեկատվության ազատության մասին օրենքներ
- Աշխատանքային իրավունքներ
- Լրագրողների աղբյուրների պաշտպանություն
- Վերահսկողության և տվյալների հավա-

քագրման և պահպանման մասին օրենքներ
Առցանց լրագրություն և սոցիալական լրատվամիջոցներ
Հանրային ծառայության հեռարձակում. հեռուստատեսություն և ռադիո:

British Broadcasting Corporation-ի (BBC) խմբագրական արժեքներն ու ստանդարտները

BBC-ն իրեն հատուկ պատասխանատվություն է վերագրում իր՝ Մեծ Բրիտանիայի և միջազգային լսարանների առջև, երբ հակամարտություն է լուսաբանում, ներառյալ՝ պատերազմները, ահաբեկչության գործողությունները և այլ արտակարգ իրավիճակներ: Լրատվամիջոցը սա հիմնավորում է նրանով, որ ամբողջ աշխարհում մարդիկ վստահելի նորությունների և տեղեկատվության համար իրենց ծառայություններից օգտվելիս ակնկալում են, որ իրենք նրանց կտրամադրեն տեղեկություններ և վերլուծություն, ինչպես նաև կառաջարկեն տեսակետների և կարծիքների լայն շրջանակ: Այդ իսկ պատճառով պատշաճ ճշգրտություն և անկողմնակալություն կիրառելու հարցում իրենք պետք է **բծախնդիր** լինեն:

Այստեղ կարևորվում է լրատվամիջոցի ինչպես լեզուն, այնպես էլ անգամ տոնը՝ մարդկային տառապանքների և կորուստների մասին գրելիս՝ անպայման նկատի ունենալով, որ դրանց մասին հարազատները չպետք է տեղեկանան լրատվամիջոցից:

Խմբագրական և էթիկական նկատառումներից զատ՝ BBC--ն իր աշխատանքում հիմնվում է, այսպես կոչված, «Ահաբեկչության ակտերի» վրա («Ահաբեկչության մասին» 2000 թ. օրենքը Մեծ Բրիտանիայում հակաահաբեկչական օրենսդրության հիմնական մասն է):

Պատերազմի լուսաբանման վերաբերյալ հատուկ ցուցումները դրված են «Խմբագրության ուղեցույցներ» կայքում:

Հատկանշական է, որ պատերազմի, ահաբեկչության, արտակարգ իրավիճակների կամ աղետների ժամանակ դիտարկման ենթակա են լրատվամիջոցի բոլոր տեսակի արտադրանքները, ներառյալ՝ ֆիլմերը, ներկայացումները, կատակերգությունները և երաժշտությունը՝ հայտնաբերելու համար այն ամենը, ինչը կարող է անտեղի համարվել ընթացիկ իրադարձությունների լույսի ներքո:

Վերոհիշյալ Ուղեցույցի 11-րդ բաժինը վերաբերում է պատերազմներին, ահաբեկչությանը և արտակարգ իրավիճակներին, այստեղ տրվում են պարտադիր կատարման ենթակա ուղղորդումներ (Mandatory Referrals)

Դրանցից առավել հիշարժան են հետևյալները:

Ահաբեկչական գործողություններով հայտնի արգելված կազմակերպությունների կամ խմբերի կողմից կազմակերպված որևէ միջոցառման մասնակցելու ցանկացած առաջարկ, որի նպատակն է ունենալ դրա փաստագրումը, պետք է փոխանցվի լրատվամիջոցի գլխավոր խմբագրին կամ անկախ արտադրողների դեպքում՝ պատվիրատուի խմբագրին: Հետագա որոշման կայացման նպատակով նմանատիպ պարտադիր ուղղորդման/տեղեկացման առավել ուշագրավ դեպքերից են՝ երբ լրագրողին լինում է առաջարկ՝ հրապարակելու այնպիսի ձայնագրություններ, որտեղ Մեծ Բրիտանիայի

քաղաքացիների հասցեին սպառնալիքներ են հնչում կամ երբ ոստիկանության կամ այլ անձանց կողմից լինում է լրահոսն ամբողջապես հեռացնելու վերաբերյալ պահանջ: «Պաշտոնական գաղտնիքների մասին» օրենքով սահմանվող՝ անվտանգության և հետախուզության հետ կապված նյութերի լուսաբանման ցանկացած առաջարկ պետք է ուղարկվի ՀԼՄ-ի իրավական բաժին՝ խորհրդատվության:

Իսկ բուն խորհուրդները՝ ստանդարտ թվարկումներով, ներառում են հետևյալ բաժինները՝

Ճշգրտություն և անաչառություն

Լսարանի մեկնաբանությունները
և մոդերացիա

Լեզվի օգտագործումը

Զոհերի նույնականացում

Անկարգություններ և խռովություններ

Սպառնալիքներ և կեղծիքներ

Տրանսպորտային միջոցների և մարդկանց
առևանգում, պատանդառում և պաշարում

Ազգային անվտանգություն
և հակաահաբեկչական գործողություններ

Ահաբեկչության ակտեր

Թշնամական միջավայր
և ճանապարհորդական խորհրդատվություն

INTERNATIONAL NEWS SAFETY INSTITUTE (INSI). ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Այս Անվտանգության օրենսգիրքը մշակվել է ոլորտում գոյություն ունեցող մի շարք կանոնների հիման վրա, որոնք պատրաստել են առաջատար լրագրողական խմբերը և լրագրողական կազմակերպությունները:

Այստեղ նշվում է, որ բոլոր լրագրողներն իրավունք ունեն իրացնելու իրենց մասնագիտությունը՝ առանց հետապնդումների, ֆիզիկական և առցանց հարձակումների:

Ընդունելով հանդերձ այն, որ լրագրողների և լրատվամիջոցների աշխատակիցների աշխատելու պայմանները երբեք չեն կարող կատարելապես ապահով լինել, INSI-ն ձգտում է վերացնել ավելորդ ռիսկը՝ խաղաղության, թե՝ բախումների պայմաններում:

INSI անվտանգության կանոններ

Ահա դրանցից առավել հիշարժանները:

Առաջնայինը կյանքի պահպանումն է: Անձնակազմին և անկախ մասնագետներին պետք է տեղյակ պահել, որ անընդունելի է հանուն որևէ ռեպորտաժի/հոդվածի դիմել չարդարացված ռիսկի:

Վտանգավոր առաջադրանքների գնալը, ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում, պետք է լինի **կամավոր,** դրանում պետք է ներգրավված լինեն փորձառու լրագրողներ, և դա պետք է իրականացվի բացառապես ռիսկերը լրջորեն գնահատելուց հետո: Ոչ մի կարիերա չպետք է տուժի վտանգավոր առաջադրանքը մերժելու հետևանքով: Լրատվամիջոցների խմբագիրները կամ առաջադրանքը կատարող լրագրողները, հնարավորության դեպքում, խորհրդակցելուց հետո կարող են դադարեցնել վտանգավոր առաջադրանքը:

Գործատուները պետք է ապահովեն արդյունավետ և անվտանգության ժամանակակից սարքավորումներ, ներառյալ՝ զրահաբաճկոններ, սաղավարտներ և պաշտպանիչ հագուստ: Բոլոր լրագրողները պետք է ունենան առաջին օգնության արդիական և լրակազմ հավաքածու: Թիմի բոլոր անդամները պետք է իմանան, թե ինչպես օգտագործել այս սարքավորումները:

Ընդհանրապես մեծ տեղ է հատկացվում **գործատուների գործողություններին՝** հնարավոր ռիսկերի մասին տեղյակ լինելու, վտանգավոր իրադարձությունները լուսաբանող լրագրողների և խմբագրության մյուս աշխատակիցների համար անվճար գաղտնի խորհրդատվություն տրամադրելու, իրենց հարազատների հետ կապված միջադեպի պարագայում ընտանիքներին ամբողջությամբ տեղեկացված պահելու իմաստներով:

GLOBAL INVESTIGATIVE JOURNALISM NETWORK ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ՑԱՆՑ

Լրագրողների անվտանգության ուղեցույցներ և բացթողումներ՝ լրագրողների անվտանգության հարցերում

Լրագրողների անվտանգության խնդիրներով զբաղվող մասնագետների կողմից 2015 թ. ստեղծվել և տարածվել է անվտանգության երկու այլ ուղեցույց՝ **«Անվտանգության գլոբալ սկզբունքներ և պրակտիկա՝ անկախ լրագրողների համար»** (ստորագրել է 77 ԶԼՄ) և **«Լրագրողների պաշտպանության միջազգային հռչակագիրը»:**

«Անվտանգության գլոբալ սկզբունքներ և պրակտիկա՝ անկախ լրագրողների համար»

Այստեղ, ի թիվս վերը նշված բոլոր ուղեցույցների կետերի, մի բաժինը նվիրված է իրենց ԶԼՄ-ին թղթակցող, սակայն հաստիքով աշխատակից չհամարվող տեղական թղթակցիների անվտանգության հարցում խմբագիրների և խմբագրությունների պարտավորություններին: Մասնավորապես, որ նրանք պարտավոր են նույն կերպ հոգ տանել վերջիններիս, ինչպես իրենց՝ հաստիքով աշխատակիցների անվտանգության մասին, պատրաստ լինել լրացուցիչ ռեսուրսներ հատկացնելու այդ նպատակներով, ժամանակին և արտահերթ կերպով կատարել նախապես պայմանավորված վճարումները, հրապարակումներում նշել վերջիններիս անունները, եթե նախապես չեն պայմանավորվել հակառակի մասին՝ ելնելով հեղինակի անվտանգության նկատառումներից, և ազատ լրագրողի առևանգման կամ վիրավորվելու պարագայում կրել նույն պատասխանատվությունը, ինչը կլիներ հաստիքով աշխատակցի դեպքում:
Բացի դրանից՝ որոշ լրատվական ընկերություններ կարող են միավորվել և ազգային մակարդակում անվտանգության միջոցառումներ մշակել: Օրինակ՝ Պակիստանի ԶԼՄ-ների ղեկավարները 2015-ին կազմել են ազգային մակարդակում լրագրողների անվտանգության շուրջ ցուցումների ցուցակ, որը ներառում է խմբագրությունում արտակարգ իրավիճակների կապի առկայության հնարավորությունը, լրագրողների համար առաջին բուժօգնության դասընթացների և անվտանգության ճեպազրույցների անցկացումը՝ նախքան ռիսկային առաջադրանքներ սկսելը:

Լրագրողների պաշտպանության միջազգային հռչակագիր

«Լրագրողների պաշտպանության միջազգային հռչակագիրը» կենտրոնանում է լրագրողների պաշտպանության հարցում **կառավարությունների և համապատասխան հաստատությունների պարտականությունների** վրա և առաջարկում է **լավագույն փորձը**՝ ԶԼՄ-ների համար, որպեսզի վերջինները և իրենց աշխատակիցները կարողանան ձեռնարկել քայլեր՝ իրենց համար ավելի անվտանգ պայմաններ ստեղծելու նպատակով:

Այստեղ միաժամանակ նշվում են **լավագույն փորձի կիրառման մարտահրավերներն ու խոչընդոտները,** որոնցից բավական նրբա-

նկատորեն ընդգծվում է անվտանգության ուղեցույցների կամավոր լինելը. «Քանի որ այս բոլոր ուղեցույցները կամավոր են, ԶԼՄ-ները, մեդիա մասնագետները և շահագրգիռ այլ կողմեր պետք է աշխատեն խրախուսել դրանք և որդեգրել այս գործելակերպը»:

Պատահական չէ, որ այս փաստաթղթում նըշվում է. «Ամբողջ աշխարհում լրատվամիջոցների կազմակերպությունների մեծ մասը չունի անվըտանգության հստակ քաղաքականություն»:

Փաստաթղթի «Լրատվամիջոցների կազմակերպություններում անվտանգության քաղաքականություն և արձանագրություններ» բաժնում կարևորվում է այս հարցում **գրավոր մշակված և ձևակերպված փաստաթղթի** առկայությունը, ինչպես նաև թվարկվում են մի քանի կարևոր կետեր՝

- ռիսկի գնահատում,

  անվտանգության խմբագրական թիմ՝ բաղկացած մենեջերից և անվտանգության հարցերով խորհրդատուից, որոնք անվտանգության արձանագրություններ են մշակում բարձր ռիսկային միջավայրում աշխատող լրագրողների համար,

  անվտանգության սարքավորումների տրամադրում,

  պարտադիր ապահովագրություն,

  սոցիալական մեդիա և թվային քաղաքականություն (որոշ լրատվամիջոցներ կարող են ակամա վտանգի ենթարկել իրենց լրագրողներին՝ նրանց ստիպելով ակտիվ լինել Twitter-ում կամ Facebook-ում՝ չնայած առցանց հետապնդումների նկատելի աճին):

  սթրեսի և վնասվածքների բուժում, այդ թվում՝ հոգեբանական:

Այստեղ ևս առանձնացվում է **«Թվային անվտանգություն»** բաժինը, որտեղ թվային միջավայրում հետապնդում իրականացնողների, սպառնալիքների հեղինակներին պարզապես հեռացնելու կամ բլոկ անելու միջոցները պայքարի բավարար միջոց չեն համարվում, մանավանդ որ պատժամիջոց չեն կարող համարվել: Առանձնացվում է թվային հետապնդումների նոր տեսակ, այսպես կոչված **doxxing-ը՝** անձի մասին անձնական կամ գաղտնի տեղեկատվության որոնումը և հրապարակումը՝ առանց վերջինիս համաձայնության: Այս գործընթացը միշտ չէ, որ ներառում է անօրինական գործողություններ, սակայն այն համարվում է ցանցային էթիկետի կանոնների խախտում: Այստեղ փաստվում է, որ լրագրողները այդ փաստաթղթերով պաշտպանված չեն Reddit կամ 4chan կայքերում, քանի որ դրանք հանդուրժում են թշնամական գրառումները, հատկապես՝ կանանց նկատմամբ, կամ առցանց լրատվական կայքերի մեկնաբանությունների բաժնում:

Որպես առաջարկություններ և հետագա քայլեր բերվում են **Կանանց միջազգային մեդիա հիմնադրամի (International women's media foundation (IWMF)** առաջարկությունները: Առաջին հերթին դրանք ուղղված են կառավարություններին՝ վերջ տալու անպատժելիությանը, ինչին հասնելու համար մամուլի ազատությունը պետք է լինի նրանց առաջնահերթություններից:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ. ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ

INTERNET-BASED PLATFORM TO PROMOTE THE PROTECTION OF JOURNALISM AND SAFETY OF JOURNALISTS

2010 թ. ԵԽ Խորհրդարանական վեհաժողովն առաջարկել է Գլխավոր քարտուղարին ռեսուրսներ հատկացնել լրագրողների և լրատվամիջոցների ազատության խախտումների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային եղանակով հավաքման, վերլուծության և փոխանակման համար (ԵԽԽՎ Rec. 1897 (2010)):

Նախարարների կոմիտեն 2013 թ. հուլիսի 10-ին որոշում կայացրեց՝ համաձայնության գալով Քարտուղարության միջոցով լրատվամիջոցների ազատության լուրջ խախտումների մասին Եվրոպայի խորհրդի համապատասխան մարմիններին հաղորդելու նպատակով՝ շահագրգիռ ԶԼՄ-ներին բաց հրավեր ուղարկելու օգտակարության շուրջ:

Այստեղ նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել անդրադառնալու համացանցային այնպիսի հարթակի ստեղծման եղանակներին, որը նպատակ կունենա հավաքագրել, մշակել և տարածել վերը նշված մարմիններին և ԵԱՀԿ լրատվության ազատության հարցերով ներկայացուցչին հասցեագրված տեղեկատվությունը:

Եվրոպայի խորհրդի ԶԼՄ-ների և տեղեկատվական հասարակության համար պատասխանատու նախարարների խորհրդաժողովը (Բելգրադ, նոյեմբեր, 2013 թ.) քաղաքական հռչակագրով վերահաստատեց իր պարտավորությունը և ընդունեց բանաձև՝ լրագրողների անվտանգության մասին:

2014 թ. ապրիլի 30-ին ընդունվեց «Լրագրության և լրագրողների պաշտպանության և անվտանգության մասին հռչակագիր», Նախարարների կոմիտեն «որոշում կայացրեց նպաստել ԶԼՄ-ների ազատությամբ շահագրգիռ կազմակերպությունների կողմից տեղեկատվության վրա հիմնված համացանցային հարթակի զարգացմանը՝ ձայնագրելու և հրապարակելու համար տեղեկատվություն «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների հնարավոր խախտումների մասին»:

Հետագայում Քարտուղարության աշխատանքային խումբը, որը կազմվել է 2014-ի հունվարին, կատարեց եզրակացություններ, որոնց հիման վրա Գլխավոր քարտուղարը համացանցային հարթակի համար կատարեց հետևյալ առաջարկը:

Համացանցային հարթակի առաջարկ

Հարթակում հավաքագրված տեղեկատվությունը հիմնված կլինի այն ընդհանուր ընկալման վրա, որ լրագրողների ազատության և անվտանգության վերաբերյալ լուրջ մտահոգությունները արձանագրվելու և հանրայնացվելու են: Որպես ընդհանուր կանոն՝ գործընկեր կազմակերպությունների կողմից տեղադրված փաստացի տեղեկատվությունը պետք է լինի հետևյալ թեմատիկ ոլորտներից.

1. լրագրողների և լրատվական դաշտի այլ դերակատարների՝ բլոգերների, գրողների, իրավապաշտպանների և հանրային շահերի դիրքերից հանդես եկող այլ անձանց նկատմամբ ֆիզիկական անձեռնմխելիության և անվտանգության սպառնալիքներ,

2. անպատժելիություն՝ վերը նշված դեպքերում,

3. լրագրողների աղբյուրների գաղտնիությանն ուղղված սպառնալիքներ կամ նրանց ֆիզիկական անձեռնմխելիությանն ու անվտանգությանն ուղղված սպառնալիքներ՝ լրագրողների, ԶԼՄ-ների կամ մարդու իրավունքների պաշտպանների կամ կազմակերպությունների հետ համագործակցության պատճառով,

4. լրագրողների անձնական կյանքին ուղղված սպառնալիքներ,

5. ԶԼՄ-ների ազատության վրա սառը ցնցուղի էֆեկտներ, մասնավորապես՝

    լրագրողների ահաբեկում դատական կարգով (զրպարտության, հակաահաբեկչական օրենքների, ազգային անվտանգության, խուլիգանության կամ ծայրահեղականության դեմ պայքարի օրենքների պատեհապաշտ կամ չարաշահող կիրառմամբ);

    քաղաքական ահաբեկում, ներառյալ ատելության խոսք և լրագրողների նկատմամբ բռնության խթանում:

COMMITTEE TO PROTECT JOURNALISTS. ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ. «ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»



Լրագրողների պաշտպանության կոմիտեի **«Լրագրողների անվտանգության ուղեցույցում»** լրագրողների անվտանգության բազային հարցերում, ի թիվս վերը թվարկված գրեթե բոլոր միջոցների և միջոցառումների, կարևորվում են լրագրողների **առողջության հարցում կանխարգելումն ու պատվաստումը, տեղեկատվական՝** կապի միջոցների, անձնական տվյալների, գաղտնաբառերի **անվտանգությունը,** զինված հակամարտություններում **արբանյակային տեխնոլոգիաների կիրառումը** թշնամական միջավայրում: Առանձին բաժիններով են ներկայացված այն միջոցները, որոնք խորհուրդ է տրվում ձեռնարկել կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի խնդիրները լուսաբանելիս, քաղաքացիական բախումների և անկարգությունների, աղետների, համաճարակների ժամանակ լրագրողների անվտանգության հարցերին: «Մշտական ռիսկի աղբյուրներ» բաժնում կարևորվում են **անձնական, ընտանիքի անվտանգությունը, մասնագիտական համերաշխությունը, սթրեսին դիմակայելը, սեփական առողջության մասին հոգ տանելը** և այլն:

INTERNATIONAL MEDIA SUPPORT(IMS) (ՁԼՄ-ՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ). ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ

Այս կազմակերպության անվտանգության փաթեթը ներառում է **դասընթացներ, գործնական միջոցառումներ** (24/7 թեժ գծեր, անվտանգ ապաստարաններ, անվտանգության ֆոնդ, անվտանգության սարքավորումներ, իրավաբանական օգնություն, շտապ օգնություն և այլն), **շահերի պաշտպանություն/ջատագովություն** (հարձակումների և սպառնալիքների մակարդակի մոնիտորինգ, միջազգային աջակցության համակարգում, ուղեցույցների և ձեռնարկների մշակում, լրագրողների պաշտպանության գործում կառավարությունների ներգրավում՝ ավելի լավ օրենքների միջոցով, և լրագրողների դերի ըմբռնում և այլն):

IMS-ի աշխատանքը համահունչ է ՄԱԿ-ի «Լրագրողների անվտանգության և անպատժելիության խնդրի» գործողությունների պլանին:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՐՑՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ծրագրի շրջանակներում հարցում է իրականացվել հայաստանյան 23 ԶԼՄ-ների շրջանում: Նրանցից 8-ը չեն պատասխանել հարցաշարին՝ զանազան պատճառաբանություններով կամ առանց պատճառաբանության: Պատասխանել են 15-ը:

Նրանցից աղետների/պատերազմների, համավարակների և այլն/ ժամանակ ճգնաժամային կառավարման մշակված **ռազմավարություն/ քաղաքականություն** ունեն 5-ը, ընդ որում խնդրանքին՝ տրամադրել դրա կրկնօրինակը, չի արձագանքել նրանցից և ոչ մեկը: 2-ը հայտնել են, որ դրանք մշակման փուլում են, 1-ը պատասխանել է, որ խմբագրության համար աղետների ժամանակ կառավարման ընթացքում հիմք են հանդիսանում տեղական և միջազգային լրագրողական կազմակերպությունների հրապարակած համապատասխան ուղեցույցները: Սիտուացիոն ինստրուկտաժ անցկացվում է 1 լրատվամիջոցում, որտեղ նաև Երևանում օդային հարվածների վտանգի օրերին անցկացվել են «Օդային տագնապի» փորձնական պարապմունքներ: Համանման լուծում են գտել ևս 2 ԶԼՄ-ում. աղետների ժամանակ կազմում են հանձնաժողովներ և նշանակում տարբեր գործառույթների պատասխանատուներ՝ Ճգնաժամային կառավարման ռազմավարության դրույթները ձևավորելով և կիրառելով՝ ելնելով առկա իրավիճակից: 3-ն ընդհանրապես չունեն: Մեկը չի պատասխանել այդ հարցին՝ պատճառաբանելով, որ և համավարակի, և պատերազմի օրերին աշխատել են բացառապես հեռավար կարգով, քանի որ խմբագրությունը շատ փոքրակազմ է, և ռազմական գործողությունների վայր ոչ մեկին իրենք չեն գործուղել:

44-օրյա պատերազմի ժամանակ ռազմական գործողությունների վայր աշխատակիցներ (լրագրող, օպերատոր, վարորդ, ֆիքսեր և այլն) **գործուղել** է 12 ԶԼՄ, որոնցից մեկի օպերատորը օդային հարվածի ժամանակ վիրավորվել է: Մյուս երեքը պատերազմը լուսաբանել են՝ օգտվելով այլ աղբյուրներից, «թույլատրելիի սահմաններում տարածելով ինֆորմացիա՝ իրենց ձևակերպմամբ:

Պատերազմական գործողությունների վայր աշխատակիցներ գործուղած 13 լրատվամիջոցների աշխատակիցներից և ոչ մեկը չի ունեցել կյանքի, առողջության, գույքի **ապահովագրություն՝** բոլորն էլ ֆինանսների սղության պատճառով: Սակայն նրանցից մեկը ներկայացրել է նաև դրա մեկ այլ պատճառ. ***«Պատերազմի հենց առաջին օրերից խմբագրությունը բանակցել է Հայաստանում գործող բոլոր ապահովագրական ընկերությունների հետ՝ փորձելով լուծել տեղում աշխատող լրագրողների կյանքի ապահովագրություն հարցը, ինչը, ցավոք, անհնար էր, քանի որ Հայաստանում գործող որևէ ապահովագրական ընկերություն այդ օրերին չէր մատուցում նման ծառայություն»:***
Իսկ խմբագրության սեփական միջոցների հաշվին կարողացել են աշխատակիցներին ապահովել միայն առաջին օգնության համար անհրաժեշտ պարագաներով:

Մի խմբագրությունից պատասխանել են, որ արդեն մտածում են ապահովագրության

ուղղությամբ և որոշակի քայլեր են անում. ***«Օրինակ՝ փորձում ենք մեր տարեկան բյուջեում միջոցներ հատկացնել նաև այսօրինակ ծախսերի համար»:***

Լրատվական գործակալություններից մեկը հավաստիացրել է, որ ունի սեփական հիմնադրամ, որի միջոցով փորձել են բավարարել իրենց ծախսերը՝ առանց մանրամասնելու, թե արդյոք ապահովագրություն էլ են իրականացրել: Մեկ ուրիշի տնօրինության որոշմամբ էլ աշխատակիցներին վճարվել են պարգևատրումներ, ինչպես նաև հավելյալ աշխատած ժամերի/օրերի համար:

Պատերազմական գոտի մեկնելիս վերը նշված 13 լրատվամիջոցների ներկայացուցիչները անձնական տվյալների **ձևաթուղթ** չեն լրացրել, նրանցից երեքը դա հիմնավորել է նրանով, որ իրենց կադրերի բաժնում, միևնույն է, այդ տվյալները կան՝ բացառությամբ արյան խմբի մասին տվյալների:

Հարցին, թե ինչպես են ապահովել պատերազմական գործողությունների վայր գործուղված աշխատակիցների անվտանգությունը, 15 ԶԼՄ-ներից 8-ը պատասխանել է, որ իրենց աշխատակիցներին տրամադրել են պաշտպանիչ բաճկոններ, սաղավարտներ: Նրանցից 3-ը դա արել են գործընկեր լրագրողական կազմակերպությունների հետ համագործակցությամբ, 2-ը՝ սեփական միջոցներով, իսկ մյուսները չեն նշել, թե ինչ միջոցներով:

10-ը նշել են, որ չունեն աշխատակիցների անվտանգության **քաղաքականություն** (կարգ), մեկի մոտ մշակման փուլում է, երկուսը՝ հետևել են պատերազմական գործողությունների ժամանակ միջազգայնորեն ընդունված անվտանգության կանոններին կամ ըստ ողջամտության և պահի թելադրանքի՝ շուրջօրյա կապի մեջ լինելով կազմակերպության ղեկավարության հետ՝ ծագած ռիսկերը քննարկելով և ըստ իրավիճակի որոշումներ կայացնելով:

2 ընկերություն ունի արտակարգ իրավիճակներում գործելու պլան, ինչպես նաև աշխատանքի տեխնիկական անվտանգության կանոնակարգ: Իսկ մեկ խմբագրությունում անհրաժեշտություն չեն տեսել և ներկայումս էլ չեն տեսնում աշխատակիցների առանձին անվտանգության կարգ ունենալու, քանի որ աշխատողի այդ իրավունքն ամրագրված է ՀՀ աշխատանքային օրենսգրքով և խմբագրությունում վավերացված է աշխատողի հետ պայմանագրով:

Անհատական պաշտպանական միջոցներ ձեռք բերելու համար **հովանավոր/ֆինանսավորող** ունեցել է միայն մեկ ԶԼՄ՝ պաշտպանիչ բաճկոններ ձեռք բերելու, ինչպես նաև Արցախ մեկնելու հարցում: Մյուսներին այդ հարցում օգնել են տարբեր գերատեսչություններ և կազմակերպություններ՝ Արտաքին գործերի նախարարությունը, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը: Մեկը անհատական պաշտպանական միջոցները ձեռք է բերել սեփականատիրոջ հովանավորությամբ, իսկ մեկ խմբագրությունից էլ պատասխանել են, որ պատերազմով պայմանավորված բոլոր ծախսերն արվել են իրենց ընթերցողների նվիրատվություններով:

Պատերազմի ժամանակահատվածում զգացվել է հետևյալ միջոցների անհրաժեշտությունը,

որոնք լրատվամիջոցները չեն կարողացել ապահովել սեփական միջոցներով՝ բաճկոնների, սաղավարտների, անհատական փոխադրամիջոցների կամ դրանք վարձելու, առաջնագծում ուղեկցողի, որը ծանոթ կլիներ տեղանքին և կօգներ չմոլորվելու, գերի չընկնելու հարցում, նաև՝ կապի այլընտրանքային ուղիների լուրջ կարիք, որպիսիք թույլ կտային կապի բացակայության պայմաններում հաղորդակցվել:

Հատկանշական է այս հարցին տրված պատասխաններից մեկը. «Համավարակի եւ պատերազմի ընթացքում սեփական միջոցներով որևէ բան ապահովելն ինքնին դժվարություն էր, քանի որ խմբագրության ֆինանսական մուտքերն ու ելքերը խիստ սահմանափակ էին»:

Պատերազմից հետո **ի՞նչ է փոխվել** աշխատակիցների/լրագրողների անվտանգության հարցում ձեր քաղաքականության/կարգերի մեջ/պրոտոկոլում/ուղեցույցում (եթե կա գրավոր ձևակերպված փաստաթուղթ): Մինչև ռազմական գործողությունները սկսելը՝ պատերազմ լուսաբանող լրագրողները և նրանց ուղեկցող այլ աշխատակիցներ անցե՞լ են վերապատրաստում պատերազմի, հակամարտությունների լուսաբանման ուղղությամբ: Այս հարցերին տրված պատասխաններից տիպական է հետևյալը. «Պատերազմից հետո աշխատանքային քաղաքականության մեջ խոշոր հաշվով բան չի փոխվել, սակայն այդ ընթացքում լրագրողներն առցանց մասնակցել են պատերազմի լուսաբանմանն առնչվող մի քանի սեմինարների»: Կամ՝ «Խմբագրությունը պայմաններ ստեղծեց, որպեսզի իր լրագրողները կարողանան մասնակցել այդ դասընթացներին, որոնք պատերազմի կամ հետպատերազմյան իրավիճակը լուսաբանելուն էին առնչվում: Դասընթացները տեղի էին ունենում միջազգային և տեղական դասընթացավարների մասնակցությամբ»: Երկուսը նշում են ՊՆ սեմինարներ, նրանցից մեկը դա արել է հենց պատերազմի ընթացքում, 4-ը չեն անցել նախապատերազմական դասընթաց:

Լրատվամիջոցներից մեկն ունի «պատերազմական ու ասիմետրիկ վիճակներում արագ կողմնորոշվելու օպերատիվ, արագ արձագանքման, հատուկ պատրաստվածություն անցած մասնագիտացված խմբեր, որոնք էլ պատերազմի մեկնարկի հաջորդ օրն իսկ դեպքի վայրում են եղել»:
Իսկ մեկը հայտնում է, որ 44-օրյա պատերազմից հետո «կազմակերպության ներքին քաղաքականության մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք կապված էին պատերազմի և համաճարակի հետ: Թարմացվել է ուղեցույցը, մեծ ուշադրություն է դարձվում աշխատակիցների անվտանգությանը»:

Լրատավական գործակալություններից մեկը հայտնել է, որ իր «թղթակիցները ունեն պատերազմի և հակամարտությունների լուսաբանման հարուստ փորձ»՝ հավանաբար դա արդեն բավարար համարելով վերջին պատերազմի լուսաբանման համար:

Ինչ վերաբերում է **կորոնավիրուսի համաճարակի** ժամանակ անհատական պաշտպանության միջոցներով աշխատակիցներին (լրագրողներ, օպերատորներ, վարորդներ և այլն) ապահովելուն, բոլոր հարցվածները հայտնում են, որ կիրառել են ստանդարտ միջոցներ, ինչպես օրինակ՝ մուտքի մոտ մշտապես ջերմաչափով դիտարկվել է աշխատակիցների և հյուրերի ջերմությունը, ապահովված են եղել ալկոգելով, դիմակներով, ռետինե ձեռնոցներով, աշխատելիս պահպանել են ապահով հեռավորությունը, տարածքը և

սենյակները տարբեր հաճախականությամբ օդափոխվել են և ախտահանվել հատուկ նյութերով (ՀՀ Պարետի, այնուհետև ԱՆ 30-Ն հրամանով նախատեսված միջոցառումները), մի տեղում նույնիսկ անջատել են վերելակները: «Անհրաժեշտության դեպքում թիմն անցել է հեռավար աշխատանքի, վարակման դեպքերում շղթան կոտրելու համար նպատակահարմար է գտնվել թիմի աշխատանքը կազմակերպել ըստ հերթափոխերի»:

Հատկանշական է, որ համավարակի օրերին տպագիր ԶԼՄ-ների աշխատակիցները հիմնականում աշխատել են հեռավար եղանակով: «Սակայն, այն լրագրողները, որոնք աշխատանքի բերումով մասնակցել են միջոցառումների, եղել են հասարակական այլ վայրերում, ապահովված են եղել պաշտպանիչ միջոցներով՝ դիմակներով, ախտահանիչ նյութերով»:

Հարցվածներից միայն մեկն է նշել այս միջոցառումների իրականացման համար օգտագործված աղբյուրը՝ հավելյալ դրամաշնորհային մուտքեր: Այստեղ դրա հաշվին կարողացել են ապահովել ոչ միայն ախտահանման և անհատական պաշտպանական միջոցները՝ դիմակ, ձեռնոց, այլ նաև թեստի վճարում: ԶԼՄ-ներից ևս երկուսը նշել են թեստավորման մասին. հեռուստաընկերություններից մեկի տնօրինությունը տեղեկացնում է. «**Կասկածելի դեպքերի առկայության դեպքում նույն սենյակում աշխատող լրագրողներին կամ տեխնիկական անձնակազմի անդամներին վճարել ենք և ուղարկել ենք թեստ հանձնելու: Միայն թեստի բացասական պատասխանի դեպքում թույլատրել ենք նրանց մուտքը հեռուստատեսության տարածք»: Մյուսում «անգամ հնարավոր թուլություն և կասկածներ ունենալու դեպքում աշխատակիցները պարտադիր կերպով պահպանել են տասնչորսօրյա կարանտինային ռեժիմ, իսկ հիվանդացած աշխատակիցները վերադարձել են լիակատար ապաքինումից հետո՝ դա հաստատող թեստի առկայության պայմաններում միայն»:**

«Արագ արձագանքման ֆոնդ» ծրագրի շրջանակներում անցկացվող հարցմանը մասնակցել են՝

«5-րդ ալիք»,
«Ա1 պլյուս»,
«Առավոտ»,
«Արմենիա»,
«Արմնյուզ»,
«Սիվիլնեթ»,
«Ֆակտոր»,
«Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»,
«Հետք»,
«Լոռի թիվի»,
«Լրագիր»,
«Ֆոտոլուր»,
«Ցայգ»,
«Երկիր մեդիա»,
«Հանրային ռադիո» լրատվամիջոցները:

ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ԿԻՑ Է ԵՐԿՈՒ ՀԱՎԵԼՎԱԾ:

Հավելված 1

Հարցաշար

Սույն հարցումն իրականացվում է «Արագ արձագանքման ֆոնդ նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամի (European Endowment for Democracy) կողմից: Ծրագրի թիրախում նախևառաջ Արցախյան 2-րդ պատերազմը և դրա հետևանքները լուսաբանած լրագրողներն ու լրատվամիջոցներն են: Հիմնական նպատակն է՝ ձևավորել նրանց արագ և ճկուն աջակցության հնարավորությունները:

«Արագ արձագանքման ֆոնդ» ծրագիրն իրականացնում են Հանրային լրագրության ակումբ ՀԿ-ն, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը, Երևանի մամուլի ակումբը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը: Կոնսորցիումը մշակելու է նախաձեռնության երկարաժամկետ տեսլականը, առաքելությունն ու ռազմավարությունը:

1.Կորոնավիրուսի համաճարակի ժամանակ անհատական պաշտպանության ի՞նչ միջոցներով եք կարողացել ապահովել աշխատակիցներին (լրագրողներ, օպերատորներ, վարորդներ և այլն):

2.44-օրյա պատերազմի ժամանակ աշխատակիցներ (լրագրող, օպերատոր, վարորդ, ֆիքսեր և այլն) գործուղե՞լ եք ռազմական գործողությունների վայր:

3.Ինչպե՞ս եք ապահովել նրանց անվտանգությունը (խմբագրությունն ունի՞ աշխատակիցների անվտանգության քաղաքականություն (կարգ), եթե այո, կարո՞ղ եք օրինակ տրամադրել):

4.Ունեցել են արդյո՞ք նրանք կյանքի, առողջության, գույքի ապահովագրություն (կամ ձևավորվել է դրա փոխարեն սեփական հիմնադրամ): Եթե այո, ի՞նչ միջոցներով: Պատերազմական գոտի մեկնելիս լրատվամիջոցի ներկայացուցիչները անձնական տվյալների ձևաթուղթ լրացրե՞լ են, ի՞նչ տվյալներ են տրամադրում խմբագրությանը/խմբագրին, (ձևաթղթի օրինակ, եթե առկա է), օրինակ արևմտյան ԶԼՄ-ներում, սկսած արյան խմբից, տրամադրում են զանազան տվյալներ):

5.Արդյո՞ք ունեցել եք հովանավոր/ֆինանսավորող՝ անհատական պաշտպանական միջոցներ ձեռք բերելու համար:

6.Ի՞նչ լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն զգացվեց համավարակի և պատերազմի ժամանակահատվածներում, որոնք չեք կարող ապահովել սեփական միջոցներով:

7.Պատերազմից հետո ի՞նչ է փոխվել աշխատակիցների/լրագրողների անվտանգության հարցում ձեր քաղաքականության/կարգերի մեջ/պրոտոկոլում/ուղեցույցում (եթե կա գրավոր ձևակերպված փաստաթուղթ): Մինչև ռազմական գործողությունները սկսելը՝

պատերազմ լուսաբանող լրագրողները և նրանց ուղեկցող այլ աշխատակիցներ անցնել են վերապատրաստում՝ պատերազմի, հակամարտությունների լուսաբանման ուղղությամբ:

8.Խմբագրությունում կամ աղետների/պատերազմների, համավարակների և այլն ժամանակ ճգնաժամային կառավարման ռազմավարություն/քաղաքականություն:

Հավելված 2

Basic Texts Related to the Safety of Journalists

A non-exhaustive list of texts, declarations, decisions, resolutions and conventions related to human rights and the safety of journalists.

1. International Human Rights Laws

UN - The Universal Declaration of Human Rights(link is external) (1948)
OHCHR - The International Covenant on Civil and Political Rights (ICCPR)(link is external) (1976)
General comment 34 on the article 19 of ICCPR(link is external) (2011)
UN Commission on Human Rights - Human Rights Resolution 2005/81: Impunity(link is external) (2005)
UN Security Council - Resolution S/RES/1738 (2006)
Human Rights Council Resolution (A/HRC/RES/21/12) on the Safety of Journalists(link is external) (2012)
UN General Assembly Resolution (A/RES/68/163) on Safety of Journalists and the Issue of Impunity(link is external) (2013)
Human Rights Council Resolution (A/HRC/RES/27/5) on the Safety of Journalists(link is external) (2014)
UN General Assembly Resolution (A/RES/69/185) on Safety of Journalists and the Issue of Impunity(link is external) (2014)
UN Security Council Resolution S/RES/2222(link is external) (2015)
UN General Assembly Resolution (A/RES/70/162) on Safety of Journalists and the Issue of Impunity(link is external) (2015)
Human Rights Council Resolution (A/HRC/RES/33/2) on the Safety of Journalists(link is external) (2016)
UN General Assembly Resolution (A/C.3/72/L.35/Rev.1) on the Safety of Journalists and the Issue of Impunity (link is external) (2017)
Human Rights Council Resolution (A/HRC/RES/39/6) on the Safety of Journalists(link is external) (2018)
UN General Assembly Resolution (A/RES/74/157) on the Safety of Journalists and the Issue of Impunity(link is external) (2019)
UN General Assembly Resolution (A/RES/75/101) “Information in the Service of Humanity” (link is external)(2020)

2. UNESCO Resolutions, Decisions, and Declarations on Safety of Journalists General Conference Resolutions

UNESCO Resolution 29 on the Condemnation of Violence against Journalists adopted during the 29th General Conference (1997)
UNESCO Resolution 53 adopted during the 36th General Conference (2011)
UNESCO Resolution 39 on Strengthening UNESCO leadership in the implementation of the UN Plan of Action adopted during the 39th General Conference (2017)

Executive Board Decisions

UNESCO 196th Executive Board Decision (196 EX/31) on Safety of Journalists and the Issue of Impunity (2015)
UNESCO 201st Executive Board Decision (201 EX/Decision 5.I.I) on Safety of Journalists and the Issue of Impunity (2017)
UNESCO 202nd Executive Board Decision (202 EX/Decision 5 I.K) on Safety of Journalists and the Issue of Impunity (2017)
UNESCO 206th Executive Board Decision (206 EX/SR.7) on the Safety of Journalists and the Issue of Impunity (2019)

IPDC Intergovernmental Council Decisions

IPDC Decision on the Safety of Journalists and the Issue of Impunity (2008)
IPDC Decision on the Safety of Journalists and the Issue of Impunity (2010)
IPDC Decision on the Safety of Journalists and the Issue of Impunity (2012)
IPDC Decision on the Safety of Journalists and the Issue of Impunity (2014)
IPDC Decision on the Safety of Journalists and the Issue of Impunity (2016)
IPDC Decision on the Safety of Journalists and the Issue of Impunity (2018)
IPDC Decision on the Safety of Journalists and the Issue of Impunity (2020)

World Press Freedom Day Declarations

UNESCO's Belgrade Declaration on Media in Conflicts Areas in Countries in Transition (2004)
UNESCO's Medellin Declaration Securing the Safety of Journalists and Combatting Impunity (2007)
UNESCO's Carthage Declaration on press freedom and the Safety of Journalists (2012)
UNESCO's San José Declaration on Securing Freedom of Expression in all Media (2013)
UNESCO's Paris Declaration on Media Freedom for a Better Future (2014)
UNESCO's Riga Declaration on Better Reporting, Gender Equality and Media Safety in the Digital Age (2015)

Finlandia Declaration on Access to Information and Fundamental Freedoms (2016)

Jakarta Declaration “Critical Minds for Critical Times: Media’s role in advancing peaceful, just and inclusive societies” (2017)
Accra Declaration “Keeping Power in Check: Media, Justice and the Rule of Law” (2018)
Addis Ababa Declaration “Journalism and Elections in Times of Disinformation” (2019)
Joint Declarations by the UN Special Rapporteurs for Freedom of Expression
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on Promoting Freedom of Expression (link is external)(1999)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration about Censorship by Killing and Defamation(link is external) (2000)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on International Mechanisms for Promoting Freedom of Expression (link is external)(2002)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration(link is external) (2005)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on International Mechanisms for

Promoting Freedom of Expression (link is external)(2006)

UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on the Challenges to Freedom of Expression in the Next Decade(link is external) (2010)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on Crimes against Freedom of Expression(link is external) (2012-2)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on Violence against Journalists and Media Workers in the Context of Protests(link is external) (2013-3)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Press Release on Stronger Protection of Journalists Covering Conflicts (link is external)(2014-2)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on Freedom of Expression and Responses to Conflict Situations(link is external) (2015)
UN Special Rapporteurs for Freedom of Expression Joint Declaration on Challenges to Freedom of Expression in the Next Decade(link is external) (2019)

3. Universal Periodic Review Process (including UNESCO’s Contribution)

The Human Rights Council Universal Periodic Review(link is external) (UPR) is the UN reporting mechanism on human rights in all UN Member States, to which UNESCO contributes on the fundamental human right freedom of expression, freedom of information, and safety of journalists, amongst others. It convenes three times a year and provides the opportunity for each Member State to declare what actions they have taken to improve human rights within their borders and to fulfill their obligations.
13th Session(link is external) (2012) | 14th Session(link is external) (2012) | 15th Session(link is external)

(2013) | 16th Session(link is external) (2013) | 17th Session(link is external) (2013)
18th Session(link is external) (2014) | 19th Session(link is external) (2014) | 20th Session(link is external) (2014) | 21st Session(link is external) (2015) | 22nd Session(link is external) (2015)
23rd Session(link is external) (2015) | 24th Session(link is external) (2016) | 25th Session(link is external) (2016) | 26th Session(link is external) (2016) | 27th Session(link is external) (2017)
28th Session(link is external) (2017) | 29th Session(link is external) (2018) | 30th Session(link is external) (2018) | 31st Session(link is external) (2018) | 32nd Session(link is external) (2019)
33rd Session(link is external) (2019) | 34th Session(link is external) (2019) | 35th Session(link is external) (2020)

4. Regional Instruments of Human Rights Laws

African Charter on Human and People's Rights for Africa(link is external) (1981, in force since 1986)
American Convention on Human Rights(link is external) (1969, in force since 1978)
European Convention on Human Rights for Europe(link is external) (1950, in force since 1953)
Arab Charter on Human Rights(link is external) (2004, in force since 2008)

5. Humanitarian Laws

The Geneva Conventions of 1949(link is external) and their additional protocols

6. Other Measures Specific to the Safety of Journalists

ICRC 31st International Conference's Resolution 2 on 4-Year Action Plan(link is external) (2011)
World Summit on the Information Society (WSIS)+10 Final Statement (2013) and the WSIS+10 High Level Outcome Documents(link is external) (2014)
Council of Europe: Declaration by the Committee of Ministers on the protection and promotion of investigative journalism(link is external) (2007)
Council of Europe: Declaration of the Committee of Ministers on the protection of journalism and safety of journalists and other media actors(link is external) (2014)
EU Human Rights Guidelines on Freedom of Expression Online and Offline(link is external) (2014)
Council of Europe: Recommendation CM/Rec(2016)4 of the Committee of Ministers to Member States on the protection of journalism and safety of journalists and other media actors(link is external) (2016)
OSCE Ministerial Council Decision MC.DEC.3/18 on the Safety of Journalists(link is external) (2018)
Global Conference for Media Freedom: Global Pledge on Media Freedom(link is external) (2019)
Information and Democracy Partnership, initiated by the NGO Reporters without Borders (link is external) (2019)
7. Statements by Non-Governmental Organizations and Civil Society

The London Statement by members of the global media community on the Safety of Journalists and the Issue of Impunity (2012)
Recommendations of the Warsaw International Conference on the Safety of Journalists (2013)
Global Safety Principles and Practices(link is external), a set of international safety standards for freelance reporters on dangerous assignments, signed by a coalition of major news companies and journalism organizations (2015)
International Declaration on the Protection of Journalists(link is external), by the International Press Institute, International News Safety Institute, Africa Media Iniative, and the Al Jazeera Media Network (2016)
Joint Declaration on Media Independence and Diversity in The Digital Age" (link is external)(2018)

8. National Statements and Declarations resulted of National Consultations on the UN Plan of Action

Islamabad Declaration on Safety of Journalists and Impunity Issues (2012)
Philippine Plan of Action on the Safety of Journalists(link is external) (2019)

9. Key International Court Decisions

Carvajal Carvajal v. Columbia(link is external) (2018). Inter-American Court of Human Rights
Herzog et al. v Brazil (link is external)(2018). Inter-American Court of Human Rights

ՆՇՈՒՄՆԵՐ

ՆՇՈՒՄՆԵՐ

+374 12 755 898
www.pjc.am
info@pjc.am

© 2021 Բոլոր հեղինակային իրավունքները պատկանում են
«Հանրային լրագրության ակումբ» ՀԿ-ին, Երևանի մամուլի ակումբին,
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնին:

Սոցիալական մեդիա՝